ԵՐԵՍՈՒՆ ԵՒ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ ԹԻՒ 3633 ԵՐԿՈՒՇԱԲԹԻ 12 ՄԱՐՏ 1884 Ն. Տ. 24 ՄԱՐՏ

ԲԱԺԱՆԳԻՆ
Տարեկան գին Կ. Պոլսոյ համար 10 մէճիտ
» » Գաւառաց » 12 »
Վեցամսեայ » Կ. Պոլսոյ » 5 1/2 »
» » Գաւառաց » 6 1/2 »
Եռամսեայ » Կ. Պոլսոյ » 3 »
Օտար Թղթատարով ղրկուած 2 1/2 լիրա
Ծանուցման տողը մէկ անգամի համար 3 ղրշ. երկու անգամի համար 2 ղրշ է. ուրիշ անգամներու համար զատ սակարկութիւն կը լինի

ՄԱՍԻՍ
ԼՐԱԳԻՐ

40 ՓԱՐԱՅ ՀԱՆԱՊԱԶՕՐԵԱՅ 40 ՓԱՐԱՅ

ԹԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Դուրսէն ղրկուած յօդուածոց համար ծանր [illegible] խմբագրութեան վրայ է.
Լրագրոյ վերաբերեալ նամակ կամ որ և իցէ գրութիւն խմբագիր–Տնօրէնին պէտք ուղղուի Կ. Պոլիս Երզա փաշա եօզուշը, Շարք Զարզըրը Թիւ 37 Մասիսի գրասենեակը:
[illegible] ծախքը չվճարուած նամակ չընդունուիր :
Զրկուած նամակ, յօդուած, եւայլն ետ չեն տրուիր :

Կ. ՊՈԼԻՍ 12 ՄԱՐՏ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մայրաքաղաքիս Սպանիական նախարար դեսպան Ռաքոն կոմսն հինգշաբթի օրը վեհ. Սուլթանին ներկայանալու և իւր հրաժեշտի ողջոյնները մատուցանելու պատիւ ունեցաւ :

Հանրային կրթութեան նախկին նախարար Միւնիֆ փաշա շաբթուս քանիցս վեհ. Սուլթանին ներկայանալու պատիւ ունեցաւ :

Արտաքին գործոց նախարար Բարձր. Արիֆի փաշա երէկ Նախարարաց խորհրդոյ նիստին ներկայ գտնուեցաւ :

Կրիտի կուսակալ Ֆոթիատէս փաշա երէկ քանիցս ներկայ գտնուեցաւ Նախարարաց խորհրդոյ խորհրդակցութեանց,

Խասգիւղի Հրկիզելոց Նպաստամատոյց բարձր Յանձնախումբն, տակաւին 1200 ոսկի ունենալով իւր տրամադրութեան ներքեւ, որոշեր է այդ գումարը յատկացնել Խասգիւղի մէջ մեծ դպրոցի մը շինութեան՝ հրկիզեալ հինգ դպրոցաց տեղ : Այս նպատակաւ, Յանձնախումբն վեհ. Սուլթանին տեղեկագիր մը մատուցեր է, ինչպէս նաև աղերսագիր մը, խնդրելով Ն. Վեհափառութենէն վաւերացնել այս դպրոցին շինութիւնն որ իւր Օգոստափառ անունը պիտի կրէ և ուր թուրքերէն լեզուին ուսումը պարտաւորիչ պիտի լինի :

Վեհ. Սուլթանն ամսական թոշակ մը կապած է Ճէզայիրցի վախճանեալ հանրածանօթ Շէյխ Ապտիւլ-Գատէրի ընտանեաց : Սուրիոյ ժողովրդեան ներկայացուցիչներն այս առթիւ շնորհակալեաց ուղերձ մը ղրկած են Ն. կայսերական վեհափառութեան :

Յայտնի է թէ Ադրիանուպոլսոյ Օսմ. զօրաց առժամեայ հրամանատար Վէյսէլ փաշա, վերջին օրերս պաշտօնանկ լինելով, Կ. Պոլիս կանչուած և հարցաքննութեան ենթարկուած էր յատուկ յանձնախմբի մ'առջև : Մօնիթէօր կ'ըսէ թէ յանձնախումբն Վէյսէլ փաշայի անմեղութիւնն հաստատած լինելով, վեհ. Սուլթանն Բ. կարգի Օսմանիէ պատուանշան շնորհեր է Ն. Վսեմութեան և միանգամայն հրաման ըրեր է որ իւր ծախիւք տպարան մը վարձուելով՝ նորա տրամադրութեան ներքեւ դրուի : Վէյսէլ փաշա հինգշաբթի օրը վեհ. Սուլթանին ներկայացաւ, որ 200 ոսկւոյ պարգև մը տուաւ անոր :

Եւրոպական լրագիրք ոմանք վերջին օրերս ծանուցին թէ Սուտանի սուտ մարգարէն յայտարարութիւններ ցրուել տուած էր Արաբիոյ զանազան գաւառաց մէջ : Մօնիթէօր Օրիանթալ ստոյգ աղբիւրէ առնուած տեղեկութեանց յենլով՝ բացորոշապէս կը հերքէ այս զրոյցն, որ սա իրողութենէն ծագում առած է . Պաղտատի մէջ յիմար մարդ մը իբր թէ Սուտանի խաբեբայ մարգարէէն եկած կեղծ նամակ մը կարդալ ուզելով քանի մը ապուշներու առջև, ձերբակալուեր է ոստիկանութեան կողմէ, բայց յաջորդ օրն ազատ թողուեր է, հաստատուելով թէ կատարեալ յիմար մ'էր : Այնուհետեւ ոչ ևս խօսք լսուած է սուտ մարգարէին կարծեցեալ յայտարարութեանց վրայ :

Եգիպտոսէն եկած վերջին լուրերը կը ծանուցանեն թէ Պերպերի և Ասուանի մէջև հաղորդակցութիւնք երեք օրէ ի վեր ընդհատուած են : Սուաքիմէն եկած հեռագրեր կը ծանուցանեն թէ ապստամբք յիշեալ քաղաքէն քանի մը փարսախ հեռի իրենց գրաւած դիրքերը թողլու կը ձգտին և կերեւի թէ նոր յարձակում մ'ընելու մտօք կը համախմբին :

Պուլղարիոյ կառավարութեան հրամանաւ, Վառնայի և Ռուսճուգի մէջ մեծ պատրաստութիւնք կը լինին Աւստրիոյ գահաժառանգ Ռոտոլֆ իշխանին ընդունելութեան համար : Սոֆիայի հանրային շինութեանց նախարարութիւնն ամեն միջոց ձեռք առած է Ն. Բարձրութեան չոգենաւ մտնելն ու չոգենաւէն ելնելը դիւրացնելու համար :

Անգլիական ընդհանուր հիւպատոս Պ. Ֆաուսէթ չկրնալով չարաթ օրը մեկնիլ մայրաքաղաքէս, վաղուան յետաձգած է իւր ուղեւորութիւնն : Իսդըրն Էքսբրէս կ'ըսէ թէ Պ. Ֆաուսէթ, ոչ թէ մասնաւոր, այլ պաշտօնական գործոյ պատճառաւ յԱնգլիա պիտի երթայ :

Թարիգ լրագրէն առնլով ծանուցինք թէ Ռումանական չոգենաւ մը, որ պայթուցիկ նիւթեր կը բերէր, Դարդանէլի առջև արգիլուած էր : Շարաթ աւուր Ֆրանսերէն լրագրաց խօսքին նայելով, Ռումանական Բիւլմանօ չոգենաւն ո՛չ թէ պայթուցիկ, այլ Ռումանական կառավարութենէն ապսպրուած ռազմամթերք կը բերէր, որք պիտի յանձնուէին Սուլինայի Ռումանական զինուորական իշխանութեանց :

Թարիգ, իւր այս աւուր խմբագրական յօդուածին մէջ, եկեղեցական առանձնաշնորհմանց խնդրոյն վրայ խօսելով, կ'ըսէ թէ վեհ. Սուլթանն երբեք չպիտի թողու տայ որ ամենափոքր վնաս մը հասնի յոյն հասարակութեան իրաւանց . միանգամայն կը յարէ . «Յոյներն, որոց բարձր իմացականութիւնը ճանչուած է, քան զայս առաւել կարող են գնահատել առաջադրեալ տնօրէնութեանց պատեհաւորութիւնը :»

Յունաց Պատրիարքին բաղձանաց հակառակ, Ս. Սինոդն և Ազգ. Ժողովն երէկ որոշեցին Բ. Դուռը ղրկել եկեղեցական առանձնաշնորհմանց վերաբերեալ վերջին ընդարձակ Յիշատակագիրը :

Մայրաքաղաքիս Ռումանական և Հելլենական դեսպանները՝ շաբաթ օրը Բ. Դուռն երթալով՝ տեսակցեցան Արտաքին գործոց նախարար Բարձր. Արիֆի փաշայի հետ :

Արեւելեան Ռումէլիի քաղաքապահ զօրաց հրամանատար Մահիր փաշա (Փորթուիք զօրավար), նախընթաց օրը հրաժեշտով մայրաքաղաքս եկաւ, և երէկ ալ մասնաւոր տեսակցութիւններ ունեցաւ Սպարապետ Ղազի Օսման փաշայի և սպայակոյտի Նախագահ Էսհէմ փաշայի հետ :

Ռումանիոյ դեսպանը խնդրեց Բ. Դռնէն, որպէս զի Դարդանէլի առջեւ արգիլեալ Ռումանիոյ չոգենաւին թոյլ տրուի նեղուցէն անցնիլ :

Վերջին թղթաբերով եկած Հելլենական լրագիրք կը ծանուցանեն թէ, կ'ըսէ Լա Թիւրքի, Պոլիս բնակեալ հելլենացիք իրենց կառավարութեան մատուցանելի բողոքագիր մը ստորագրեր են յորում կը բացատրեն իրենց տրտունջներն ընդդէմ Կ. Պոլսոյ Հելլենական դեսպան Պ. Քունտուրիոթիի : Այս բողոքագիր յատուկ պատգամաւորութեան մը ձեռամբ պիտի ղրկուի եղեր :

Ժուռնալ տը Քոնսթանթինօբլ կը ծանուցանէ թէ Տօպրուճայի Իսլամ բնակիչք, որք իրենց երկրէն գաղթելու խորհուրդն ի բաց թողած էին, այժմ վերստին գաղթել սկսեր են և անոնցմէ մեծ մաս մը յառաջիկայ չոգենաւերով մայրաքաղաքս կ'սպասուի :

Սպարապետութիւնը Լոյտի Աւստրիական ընկերութեան Բիկա չոգենաւով 245 Օսմ. զօրք ղրկեց ի Հոտէյտա :

Սուաքիմէն կը հեռագրեն առ Մօրնինկ Բոսթ թէ սաստիկ տաքին պատճառաւ Անգլիական զօրաց մէջ տենդ և ծաղկի հիւանդութիւն ծագած են :

Ընդծովեայ հեռագրական պարաններու պաշտպանութեան վերաբերեալ միջազգային պայմանագիրը քանի մ'օր առաջ կնքուեցաւ Փարիզի մէջ արտաքին գործոց նախարարութեան պաշտօնատունը : 26 տէրութիւնք հաւանութիւն տուած են այս պայմանագրին և [illegible] յօդուած մը կըվերապահէ չստորագրող տէրութեանց հաւանութիւն տալու իրաւունքը :

Արեւելեան Ակումբի Տնօրէն Ժողովը, վերջին գայթակղական դէպքը քննելու համար, 12 [illegible] անդամներէ կազմուած Մասնախումբ մ'ընտրեց, որոց Հայ անդամք են Վսեմ. Աբրահամ փաշա Երամեան, Վսեմ. Սարգիս էֆէնտի Համամճեան և Մեծ. Մկրտիչ էֆէնտի Էսաեան : Մասնախումբն իւր առաջին նիստն ըրաւ երէկ գիշեր եւրոպական ժամ 9 1/2 ին.

Այս աւուր Վառնայի թղթաբերով մեր ստացած Եւրոպական լրագրաց մէջ հետեւեալ հեռագրերը կը տեսնեմք .

Լոնտրա 18 մարտ . — Նախարարութեան կացութիւնը միշտ տագնապալից է : Լորտ Հարդինկդըն երէկ վեհ. Թագուհւոյն ներկայացաւ :

Սուաքիմ 18 մարտ . — Սուաքիմէն կը հեռագրեն թէ Օսման Տիկնա սուրբ պատերազմ կը քարոզէ : Նորէն երկու հազար համախոհ ունի և որոշած կ'երեւի կռիւը շարունակել : Իւր կողմէ ղրկուած լրտեսներ Անգլիացւոց շարժումները կը դիտեն և անգլիական բանակին յետամնաց զինուորներն սպաննելու պաշտօն ունին :

Լոնտրա 18 մարտ . — Եգիպտոսէն կը գրեն առ Թայմզ թէ Սուտ Մարգարէն Անգլիացւոց վրայ իւր տանելիք վերջնական յաղթութենէն առաջ երկու մեծ պարտութիւններ գուշակած լինելով, դժուարին է դատել թէ Օսմ. Տիկնա ինքզինք պարտեալ պիտի խոստովանի՞ : Թայմզի թղթակիցն Օսման Տիկնայի գլուխը բերողին վարձատրութիւն մը խոստանալն անքաղաքագիտական գործ մը կը համարի, որ կրօնական մարտիրոսի մ'ազդեցութիւնը պիտի տայ Մէհտիի տեղակալին : Պերպերի վրայ յառաջխաղացութիւնն այս միջոցիս անկարելի է առանց օգնական զօրաց, և մէկ ամսէն յետոյ ալ բոլորովին անհնար պիտի լինի տաքութեան պատճառաւ : Այս առաւօտեան Թայմզ խմբագրական յօդուածի մը մէջ ցաւ կը յայտնէ Պ. Կլատսդոնի նախարարական խորհրդոց մասնակցելէ ձեռնպահութեան վրայ, և անգամ մ'ալ կը խոստովանի թէ իրաց վիճակն յոյժ տագնապալից է :

Գահիրէ 18 մարտ . — Հետազօտիչ հզօր զօրախումբ մը պիտի ղրկուի ի Պիր–Հանտուբ, որ Սուաքիմէն Պէրպէր տանող ճանբուն վրայ կը գտնուի :

Գահիրէ 19 մարտ . — Հաղորդակցութիւնք Պէրպէրէն անդին բոլորովին ընդհատուած են : Պէտէվի ցեղեր համախմբուած են Նեղոսի ափանց վրայ և Շէնտիի ու Խարթումի մէջև գտնուած ջրվէժը կը գրաւեն : Գաթաբիի ցեղը Շէնտիի վրայ յարձակելու կը պատրաստուի :

Լոնտրա 19 մարտ.—Անգլիական կառավարութիւնը Չինական նաւ մը արգելքի տակ դրաւ, որ Նիւքասլ կուգար Արմսդրօնկի թընդանօթ առնլու համար ,

Լոնտրա 19 մարտ.—Պ. Է. Վինսընդ երէկ Լոնտրա հասաւ : Գահիրէէն կը գրեն առ Տէյլի–Թէլէկրաֆ թէ Չէպէհր–փաշայի իբրեւ Սուտանի կառավարիչ անուանումը վաւերացնել չուզուիլը գէջ տպաւորութիւն մ'ըրած է : Եգիպտական նախարար մը յայտարարեր է Տէյլի–Թէլէկրաֆի թղթակցին թէ իրաց արդի վիճակին մէջ Անգլիա պարտական է 10 հազար Հնդիկ զօրք կանչել [illegible] : Միեւնոյն թղթակիցը տեսակցութիւն մ'ունեցած է Չէպէհր փաշայի հետ, որ տագնապալից համարեր է Կորտոն փաշայի վիճակը, բայց հաւաստեր է Կորտոն զօրավարն ողջ առողջ Գահիրէ պիտի վերադառնայ, եթէ լիազօր իշխանութիւն տրուի իրեն : Չէպէհր փաշա ուրացեր է գերեվաճառին մասնակցած լինելը: Լոնտրայի մէջ մեծ մտահոգութիւն կ'ըզգացուի Կորտոն զօրավարի վիճակին վրայ :

Լոնտրա 19 մարտ . —Թայմզ Եգիպտոսէն եկած լուրերէ առնլով կը ծանուցանէ թէ Օսման Տիկնայի ազդեցութեան ներքեւ գտնուող ցեղերն անգլիական զօրաց դիմադրելու յոյսը չեն կորուսած տակաւին : Ուստի Բրիտանական կառավարութիւնը պէտք է քննէ թէ Կրահամ զօրավարին ունեցած զօրքերն, որք թէ՛ կլիմային և թէ՛ վերջին կռիւներուն պատճառաւ բաւական ծանր կորուստներ կրած են, բաւակա՞ն են յաջողապէս ի գլուխ հանելու իրենց պաշտօնը :

ՀԵՌԱԳՐԵՐ

Պերլին, 21 մարտ .

Երեսփոխանական ժողովը, հակառակ Պիզմարք իշխանին ընդդիմութեան, որոշեց խորհրդարանական յանձնախմբի մը ղրկել ընկերվարականաց դէմ հաստատուելիք օրինաց ծրագիրը :

Լոնտրա 22 մարտ .

Լրագիրք կը հաստատեն թէ Պ. Կլատսդոնի առողջութեան բարւոքումը կը շարունակէ, եւ թէ գործոց ուղղութիւնն անմիջապէս իւր ձեռք պիտի առնու վերստին :

Լոնտրա 22 մարտ.

Հընթինկտընի պահպանողականաց ընտրելին Սըր Ռոպէրդ Բիլ երեսփոխանական ժողովոյ անդամ ընտրուեցաւ 9 ձայնից մեծամասնութեամբ :

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Նորընտիր կրօն. ժողովը, ըստ հրաւիրանաց Ամեն. Սրբազան Պատրիարք Հօր, շաբաթ օրն իւր առաջին նիստն ըրաւ Ազգ. Պատրիարքարանի մէջ և գաղտնի քուէարկութեամբ իւր մայր դիւանը կազմեց հետեւեալ կերպիւ :

Տ. Խորէն Արքեպիսկոպոս Նար–պէյ Ա. Ատենապետ .
Տ. Սիմէօն Եպիսկոպոս Սէֆէրեան Բ. Ատենապետ .
Տ. Վահան վարդապետ Տ. Մինասեան Ա. Ատենադպիր .
Տ. Տաճատ վարդապետ Ոսկանեան Բ. Ատենադպիր .

Յետոյ ժողովը զբաղեցաւ օրակարգի այն խնդրոց կարգադրութեամբ որ ժամանակէ մը ի վեր գիզուած էին և որոց կարգադրութեան դիւրութիւն մը տալու համար նախաքննիչ մասնաճիւղեր կազմեց հետեւեալ կերպիւ :

Յանձնախումբ խառն խնդրոց

Տ. Խորէն Արքեպիսկոպոս Նար–պէյ.
Տ. Գրիգոր Աւագ. Քահ. Աճէմեան .
Տ. Սահակ Աւագ. Քահ. Տ. Սարգսեան .
Տ. Յովհաննէս Աւագ. Քահ. Մկրեան :

Յանձնախումբ հանրական խնդրոց

Տ. Մատթէոս Եպիսկոպոս .
Տ. Յակոբ Վարդ. Փափազեան .
Տ. Յովհաննէս Վարդ. Արշարունի .
Տ. Խորէն Քահ. Փէհլիվանեան .
Տ. Կարապետ Քահ. Սէթեան :

Յանձնախումբ ներքին խնդրոց

Տ. Սիմէօն Եպիսկոպոս Սէֆէրեան.
Տ. Գարեգին Վարդ. Թաթարեան .
Տ. Վահան Վարդ. Տ. Մինասեան .
Տ. Տաճատ Վարդ. Ոսկանեան :
Տ. Սուքիաս Աւագ. Քահանայ Ստեփաննոսեան :

Քննիչ յանձնախումբ
Հայ և օտար հրատարակութեանց

Տ. Խորէն Արքեպիսկոպոս Նար–պէյ.
Տ. Սիմէօն Եպիսկոպոս Սէֆէրեան.
Տ. Վահան Վարդ. Տ. Մինասեան .
Տ. Տաճատ Վարդ. Ոսկանեան .
Տ. Յովհաննէս Քահանայ Մկրեան :

Կրօն. ժողովը որոշեց իւր սովորական նիստը Պատրիարքարանի մէջ ընել ամեն չորեքշաբթի օր :

Գաղատիոյ կուսակալ Վսեմ. Աջիզ փաշա, որ Ռւնիոյ հին անցից պատճառաւ ծանօթ է ազգայնոց, այս շաբթու այցելութիւն մը տուաւ Ամեն. Ս. Պատրիարք Հօր .

Բեդրսպուրկէն կը գրեն մեզ փետր. 25 թուով .

«Ամսոյս 19 ին բարեկենդան կիւրակէ օրը Պետերբուրգի հայ հասարակութիւնը իր կողմից ընտրեց մի պատգամաւոր, նոր Նախիջեւանու հաշտարար–դատաւոր Պ. Խալիպեանին, ապագայ կաթողիկոսի ընտրութեան համար . Եկեղեցումը խմբուած հայ ժողովուրդը միաձայն ցանկութիւն յայտնեց Ս. Գրիգոր Լուսաւորչու թափուր մնացած գահի վրայ տեսնել այժմեան Պատրիարք Սրբ. Ներսէս Վարժապետեանին . իսկ կանդիտատ Ջիւանիոյ առաջնորդ Գեր. Մելքիսեդեկ Մուրատեանին : Այսպէս էլ արձանագրուեց պաշտօնական գրութեան մէջ, որը և ուղարկուեցաւ Պ. Խալիպեանին, որպէս Պետերբուրգի Հայերի կողմից պատգամաւորի : Ուշադրութեան արժանի բանն այն էր, որ կառավարութիւնից ոստիկանական մի պաշտօնեայ էր ուղարկուած ընտրութեանը ներկայ գտնուելու : Ընտրութիւնից յետոյ, երբ ժողովուրդը ստորագրում էր արձանագրուած թուղթը, այդ ոստիկան–պաշտօնեան գրքակալի մօտից կանգնած չէր հեռանում . Ժողովրդի հետ միասին նա էլ թողեց եկեղեցին և գնաց : Անկասկած, այս էլ մի նոր «կանոն» դարձաւ :»

Մայրաքաղաքս գտնուող եպիսկոպոսներն երէկ մեծ մասամբ իրարու, ինչպէս նաև գործօն վարդապետաց այցելութիւն տուին :

Նորայր Բիւզանդացի ի պատասխան Գրասէր Ատոմի՝ ընդարձակ յօդուած մը ղրկած է մեզ, զոր մեր այս աւուր թուով սկսանք հրատարակել, յաջորդ թուոյն պահելով այս մասին մեր ըսելիք քանի մը խօսքերը :

Հայաստանի և Քրդաստանի նախկին Բրիտանական ընդհ. հիւպատոս հազարապետ Թրոդդըրի քարտուղար Սրապ էֆ. Սեւեան ազնիւ և ուսումնական երիտասարդը՝ չորեքշաբթի օրը մայրաքաղաքէս կը մեկնի կեսարիա երթալու համար, ուր ծխախոտի Րէժիի մասնաճիւղին տեսչութիւնը պիտի ստանձնէ :

ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ԺՈՂՈՎՈՅ
ԱՅՍ ԱՒՈՒՐ ՆԻՍՏԸ

Եկեղ . Համագումար ժողովը այսօր Մայր եկեղեցւոյ մէջ գումարեցաւ ժամ 6 ին ընդ Նախագահութեամբ Երուսաղիմայ Ամեն. Ս. Պատրիարք Հօր և ատենապետութեամբ Գրիգորիս եպիսկոպոս Ալեաթճեանի : Ներկայ անդամոց թիւն էր 59, որոց 14ն եպիսկոպոս, 16ը վարդապետ, 13ն աւագերէց և 16ն աշխարհական . Նախագահ Ամեն. Ենայի Պատրիարքը մաղթանք մ'ուղղեց առ Աստուած վասն հոգւոյ հանգուցեալ Գէորգ Դ. կաթողիկոսի . ժողովականք յոտընկայս «հոգւոց» մ'ըսին : Յետոյ Ատենապետը կարդաց Ս. Պատրիարք Հօր հրաւիրագիրն, ուղղեալ Համագումար ժողովոյ անդամոց և յայտնեց թէ Ամեն. Ս. Պատրիարք Հայրն անձնական տկարութեան պատճառաւ բացակայ լինելով, Երուսաղէմի Ս. Պատրիարք Հօր յանձնած էր նախագահութիւնը :

Յետոյ կարդացուեցաւ բողոքական հանրագիր մը, որ Կիլիկիոյ կաթողիկոսին ձեռնպահութեան դէմ բողոքելով կը խնդրէր նկատողութեան առնուլ զայս խնդիր և Տ. Մկրտիչ կաթողիկոսի անունը ջնջել ընտրելեաց ցանկէն, իբրև անարժան : Դիւանին առաջարկութեամբ որոշուեցաւ Կիլիկիոյ կաթողիկոսական յանձնախմբին յղել սոյն հանրագիրը : Եղիշէ վարդապետ Այվազեան հարցուց թէ Գատը–գիւղի եկեղեցւոյ՝ [illegible] ինչո՞ւ չէր հրաւիրուած : Դիւանին առաջարկութեամբ որոշուեցաւ ծանուցանել Ս. Պատրիարք Հօր ի գիտութիւն : Ամբրոսիոս վարդապետ Ռուբինեան բողոքեց թէ ինք ի՞նչու չէր հրաւիրուած, քանի որ դեռ չէր հրաժարած Բաբերդի առաջնորդութենէն . Որոշուեցաւ Ս. Պատրիարք Հօր ղրկել այս բողոքը : Ապա Խորէն եպիսկոպոս Նար–պէյ խօսք առնլով, երկար, լուրջ և գեղեցիկ ատենաբանութիւն մ'ըրաւ Հայաստանեայց եկեղեցւոյ Հայրապետական Աթոռոյն կարեւորութեան վրայ : Յետոյ ոչ նուազ կարեւոր բանախօսութիւն մ'ըրաւ Արմաշու վանուց վանահայր Խորէն եպիսկոպոս Աշգեան, որ գլխաւորաբար Պոլոժենիայի այն տրամադրութեանց վրայ խօսեցաւ, որք հակառակ են Հայաստանեայց եկեղեցւոյ անկախութեան : Ատենաբանը կը շարունակէր իւր ճառն, երբ լրագիրս մամուլը դրուեցաւ :

Վաղը մէկ կատարեալ նկարագրութիւնը պիտի տանք այս հանգիսաւոր և կարեւոր նստին :

ԱԶԳԱՅԻՆ

Մեր եկեղեցին կատարելապէս ժողովրդական է. Նա կազմուած է հաւատացեալներէն, այսինքն աշխարհականներէն և եկեղեցականներէն. այս վերջիններուն մէջէն, նուիրապետական դասակարգութեան մէջ ամենէն աւելի բարձրաստիճանն իսկ եկեղեցւոյ գլուխ չէ եղած երբեք։ Մեր եկեղեցին Քրիստոսէ զատ ուրիշ գլուխ չէ ճանչցած. Նա ունեցած է և ունի վերատեսուչներ, որոց իւրաքանչիւրն ունի իւր յատուկ սահմանն։ Եպիսկոպոսին սահմանն է իւր թեմն, արքեպիսկոպոսին սահմանն է աւելի ընդարձակ, պատրիարքաց և կաթողիկոսաց սահմանն ա՛լ աւելի ընդարձակ. իսկ Էջմիածնայ Աթոռին սահմանը կը պարփակէր բոլորն ալ, այսինքն կը պարունակէր ամբողջ Հայ ազգն։ Այս է ահա մեր եկեղեցւոյ պատմութեան ուրուագիծն։ Եթէ այս սահմանները փոփոխուած են, կայ բան մը որ չէ փոփոխուած երբեք. սա թէ մեր վերատեսուչներուն կամ եպիսկոպոսներուն ամենէն աւելի բարձրաստիճանն իսկ չէ կրցած երբեք իւրացնել «Գլուխ Եկեղեցւոյ» տիտղոսը, գոնէ պապականութեան տեսակէտովն, և այս՝ շնորհիւ ժողովրդական ոգւոյ Հայ ազգին։ Ասոր համար է որ մեր եկեղեցին, Հռոմէական եկեղեցին Քրիստոնեայ եկեղեցի ճանչելով հանդերձ, չէ կրցած երբեք անոր համաձայնիլ՝ վերատեսուչը փոխանորդ կամ գլուխ ճանաչելու մասին։ Մեր եկեղեցւոյ փառքերէն մին է սա պարագայն թէ միշտ մերժած է իրական գլխոյն, այն է Յիսուս Քրիստոսի տեղ պարզ վերատեսուչ մը դնելու գաղափարը, մինչև իսկ երբ այդ վերատեսուչն ամենէն սուրբ և ամենէն կատարեալ մարդն եղած լինէր։

Մեր եկեղեցւոյ իրական նկարագիրն համառօտիւ արտայայտելէ յետոյ, ի՛նչ աչքով պէտք է նայիլ մեր զանազան վերատեսուչներուն միջև տեղի ունեցած վէճերուն, դաւերուն և այն յաւակնութեանց որք ժամանակէ մ'ի վեր կը յուզեն Էջմիածնայ և Սսոյ Աթոռները. — Այն աչքով որով մեր նախնիք նայած են ուրիշ ժամանակաց վերատեսուչներուն ուրիշ ժամանակ յարուցած վէճերու և յաւակնութեանց։

Էջմիածնայ Աթոռին, որ Գէորգ Դ-ի օրով իւր ձեռնադրած եպիսկոպոսաց կ'արգիլուր ճանչել Սսոյ Աթոռոյն ձեռնադրած եպիսկոպոսները, կը պատասխանենք թէ իւր յաւակնութիւնը զո՛չ ոք կը կաշկանդէ, և ապացոյցն ալ սա է որ ազգը բնաւ խտիր չդներ Սսոյ և Էջմիածնայ ձեռնադրած եպիսկոպոսներուն միջև. Նա միշտ ընդունած և յարգած է զանոնք մի և նոյն աստիճանաւ. Նա ասով ուզած է յայտնել թէ երբեք չպիտի մասնակցի այդ գժուժ կռիւներուն, որոց ամենափոքր անպատեհութիւնն է մեր եկեղեցւոյ ժողովրդական ոգին փոխելու ձգտիլ։

Ի՞նչ պէտք է ըսել այժմ Սսոյ կաթողիկոսին նկատմամբ, որ, Էջմիածնայ գահակալին ընտրութեան առթիւ, եկեղեցւոյ նուիրապետական դասակարգութեան մէջ իւր Աթոռին աւանդական դիրք հակառակ, ինքզինք ընդհանրական կը յորջորջէ, ապօրինաւոր կը նկատէ Էջմիածնայ Աթոռն, ըստ իւր կարծեաց նաեւ ապօրինաւոր ընտրութեան մը բնաւ չմասնակցելու համար, ինչ ինչ ձեւակերպութեանց կապկօրէն կը հետեւի Սինոդի վերածելու համար ինչ որ վանական խորհուրդ մը իսկ չէ կարող նկատուիլ և սխալ իրողութիւններով պաշտպանելու համար անլուր յաւակնութիւններ։

Մեք չպիտի զարմանանք եթէ Սսոյ կաթողիկոսն, իւր վրէժն հանել ուզելով, իւր ձեռնադրած եպիսկոպոսաց արգիլէ ճանչել Էջմիածնայ Աթոռն և եպիսկոպոսներն։ Մեք չպիտի զարմանանք եթէ աւելի հեռուն երթայ, այնքան հեռու որքան կիրքը կրնայ վարել զայն, և ապահով ենք թէ յոյժ հեռու պիտի կարենայ մղուիլ։ Այս ամենը ցաւալի է, սակայն ազգին ողջմտութիւնը պիտի յաղթէ թէ՛ այդ մարդոց և թէ՛ իրենց մեքենայութեանց։ Որքան ճիգ ալ թափուի, ինչ կողմէ ալ որ աշխատուի, երբեք կարելի չպիտի լինի հերձուած մը յառաջ բերել։ Ազգը միացեալ պիտի մնայ, և իւր աչաց առջեւ պիտի ստորնանան այն անձինք զորս ընտրած է և որոց ուրիշ պաշտօն չէ յանձնած այլ խաղաղութեան և միաբանութեան։

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Յանուն անկողմնակալութեան կը հրատարակենք հետեւեալն, որ Տփղիսէն գրուած մասնաւոր նամակէ մը քաղուած է.

«. . . Այս տեղ շատեր թէեւ ըսկզբունքով դէմ էին եւ են կաթողիկոսի ընտրութեան 66 ի եղանակին, [illegible] ի նկատի առնելով, օգտակար կը համարին այս անգամ եւս 66ի եղանակաւ կատարել ընտրութիւնը։ Հայ ազգութեան կենսական շահերը զայս կը պահանջեն։ Քանի որ քննադատութեան, վիճաբանութեան եւ ընտրութեան կատարեալ ազատութիւն կը վայելէ Պոլսոյ Ազգային Ժողովը, եւ քանի որ Էջմիածնայ մէջ կատարուելիք ընտրութիւնը Ռուսիոյ կառավարութեան անմիջական ազդեցութեան ներքեւ պիտի կատարուի, ամեն ճշմարիտ Հայու պարտքն է սերտիւ ընդգրկել 66ի եղանակն, եւ անոր հակառակ եղած ամեն պահանջում, ամեն առաջարկութիւն քաջութեամբ ի բաց մերժել։ Եթէ այս խնդրոյ մէջ Ազգը փոքր ինչ զիջողութիւն ընէ եւ թողու որ, ընտրական եղանակի փոփոխութեամբ, Ռուսիոյ կառավարութեան ուզած մարդը կաթողիկոս լինի, ալ այնուհետեւ խերը տես մէկ միլիոն Ռուսահայոց. Նոցա կրօնն, ազգայնութիւնն. ամենայն ինչ կորած համարէ այժմէն։ Ռուս կառավարութիւնն իրեն համար կարեւոր եղած նախապատրաստութիւնները տեսած է արդէն։ Նորա ընտրելին է Մակար եպիսկոպոսը։ Ռուսահայք լաւ կը ճանչեն սորա ոգին. քաջ գիտեն թէ ի՛նչ տեսակ յարաբերութեանց մէջ է կառավարութեան հետ։ Ռուս կառավարութիւնն ու Մակար Սրբազան համաձայնութեամբ որոշած են արդէն այն ընթացքն զոր ապագային մէջ պիտի բռնեն Հայոց նկատմամբ։ Վա՜յ ազգին, եթէ Մակար յաջողի կաթողիկոս դառնալ։ Արդէն զինուորագրութիւնը հաստատուեցաւ. ամեն քրիստոնեաներէ զինուոր պիտի առնուի, իսկ Մահմետականներէ զինուորական տուրք։ Այժմ կը մնան դպրոցներն ու կալուածներն. ասոնք ալ կասկած չկայ որ պիտի յանձնուին, եթէ Մակար կաթողիկոսանայ։ Ձեր ազգային ժողովն ազգասիրութիւն գործած պիտի լինի, եթէ Ռուսիոյ կառավարութեան եւ Էջմիածնայ Սինոդին պահանջումներն ընդունի. եթէ մինչեւ իսկ ստիպուի ինչ ինչ զիջողութիւններ ընել, գոնէ փոխարէն պահանջելու է Ռուս կառավարութենէն որ ինքն ալ ընտրութիւն ազատ թողու Էջմիածնայ մէջ, եւ որ եւ է հակողութիւն կամ ճնշում ի գործ չը դնէ ընտրողաց վրայ։ Ռուսահայք շատ կը վախնան որ Մակար կաթողիկոս կը դառնայ. Ազգ. ժողովոյ պարտքն է ոգի ի բռին բողոքել Ռուսիոյ պահանջմանց եւ ոտնձգութեանց դէմ։ Եթէ, Աստուած մի արասցէ, կայսեր ներկայանալիք երկու ընտրելեաց ցանկին մէջ գտնուի Մակարի անունը, եւ եթէ Մակար նուազ քուէ ստացողն իսկ լինի, հաստատ գիտցիք որ ապտակ պիտի ուտէ Ազգն եւ Մակար պիտի ընտրուի։

Ինչպէս վերջին նամակովս ալ գրեցի, այս տեղ Ներսէսի կաթողիկոսացման փափաքողք փոխած են իրենց կարծիքը. Ռուսահայք օգտակար կը համարին որ Ներսէս Սրբազան Պոլսոյ պատրիարք մնայ աւելի քան Էջմիածնայ կաթողիկոս. եթէ կային ոմանք որ Ներսէսը կ'ուզէին կաթողիկոս եւ շարունակ Ներսէս Ներսէս կը պոռային, այն պատճառաւ էր որ չգիտէին թէ Մելքիսեդեկ Սրբազանն այդ [illegible] ունի եւ կը վախնային որ Մակարը կ'ընտրուի. իսկ հիմայ որ այս տեղ իմացուած է թէ Մելքիսեդեկ Սրբազան բաւական զօրաւոր կուսակցութիւն մ'ունի իւր կողմը, ամեն ոք սկսած է նորա անունը միայն յեղյեղել կաթողիկոսութեան համար։ Որչափ լաւ պիտի լինէր, եթէ Ազգային ժողովը իւր որոշման վրայ հաստատ մնար ի մասին ընտրական եղանակի, եւ ըստ ազգային բաղձանաց ընտրէր Մելքիսեդեկ Սրբազանը։ Ծայրագոյն զգուշութիւն հարկաւոր է, զի ներկայ խնդիրը չէ կուսակցական խնդիր, այլ բուն ազգային է, հայ կրօնի եւ հայ լեզուի խնդիր է։

Տպագրական խստութիւնը աւելցած է այս օրերս թէ՛ լրագիրներու եւ թէ՛ գիրքերու համար։ Այն գիրքերն որ մի անգամ տպագրուած են եւ սպառած, կրկին տպագրելու համար չկայ հրաման։ Արգելքներն ու դժուարութիւններն արդէն անցուցած են իրենց չափն։ Չենք գիտեր թէ ո՞ւր պիտի երթայ ասոր վախճանը, բայց համբերութի՜ւն, ուրիշ ի՞նչ կրնանք ընել։»

ՊԱՏԱՍԽԱՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՅ

Ա Ռ

Տ. ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԻԼԻԿԻՈՅ

Ամենապատիւ Սրբազան Եղբայր ի Քրիստոս.

Ընկալաք զգիր Ամեն. Սրբազնութեան Ձ'րոյ որ ի 5 ամսեանն փետրուարի, ի պատասխանի պաշտօնագրոյն մերոյ որ ի 1 յունուարի այսր ամի, ընդ նմին և զՏեղեկագիր Վանական ժողովոյ Աթոռոյդ՝ որով մերժէ նա զմասնակցութիւն իւր յընտրութիւն Հայրապետի Ամենայն Հայոց։

Զարմանամք ապաքէն զի զվանականդ զայդ ժողով անուանէք Սինոդ Սրբոյ Աթոռոյ, զայն առաջին նըւագ լսեալ զայդ անուն յԱթոռն Սսոյ. անծանօթ էր այդ ոչ միայն առ նախնիս, այլ և առ Ձեօք, յընթացս երեքտասնամեայ աթոռակալութեան Ձերոյ ոչ ծանուցաւ Պատրիարքարանիս, և ոչ իսկ յերկամեայ բնակութեան Ձերում ի մայրաքաղաքիս խօսեցաւ ընդ մեզ զայդմանէ։ Մանաւանդ թէ ի ծըրագրի անդ՝ զոր ընկալաւ և ձեռնագրեաց Ձերդ Ամենապատուութիւն ի 22 ամսեանն հոկտեմբերի 1881 ամի ի Կոստանդնուպոլիս, ի յօդուածն ԺԳ. ընդունի վանական ժողով ևեթ յաթոռանիստ վանս Սսոյ։

Գիտասցէ ուրեմն Ամենապատուութիւն Ձեր և Միաբանութիւն Աթոռոյդ՝ զի ազգն համօրէն որպէս և կեդր. Վարչութիւն Հայոց Տաճկաստանեայց ճանաչեն զժողովդ վանական ժողով անուամբ։

Արդ՝ դոյն այդ ժողով "յետ բազում խորհրդածութեանց և զննի մանրամասն խուզարկութեամբ քննելոյ զհին յիշատակարանն և արձանագրութիւնս Ս. Աթոռոյն", որպէս ասէ, տեղեկագրէ առ Ձերդ Ամենապատուութիւն զպատճառս մերժելոյ զմասնակցութիւն Աթոռոյն Կիլիկիոյ, յընտրութիւն Հայրապետին ամենայն Հայոց, և ի տեղեկագրութեան անդ իւրում յետ անուանելոյ զինքն Սինոդ՝ անուանէ և զկաթողիկոսութիւնն Կիլիկիոյ ընդհանրական կաթողիկոսութիւն, որ թէ առ նախնեօք և թէ առ մեօք այդ տիտղոս ընդհանրութեան չէ տուեալ առ Աթոռն Սսոյ։

Յայտ է ի պատմութենէ Ազգիս, թէ ի քաղաքական հանգամանաց Ազգին բռնադատեալ՝ թէպէտ Գահակալք Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի յածեցան ի զանազան տեղիս, այլ՝ ազգն Հայոց զԳահակալսն զայնոսիկ համարեցաւ միշտ իբրեւ զԳահակալ կաթողիկոսունս Առաքելական Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի։ Եւ կաթողիկոսունք իսկ համարեցան զանձինս Գահակալս Մայր Աթոռոյ՝ Ս. Էջմիածնի, և ոչ եթէ Դունայ, Անւոյ, Հռոմկլայ, Սսոյ են. ևն։ Ահա օրինակ իմն, Տէր Յակոբ Գ. որ եղ ի գահ Հայրապետութեան ի Սիս յամի 1406 ի վերտառութեան կոնդակի իւրոյ որ առ ժողովուրդս Հայոց Վասպուրական գաւառի, անուանէ զանձն իւր կաթողիկոս Վաղարշապատու, ասելով՝ "Այս մեր գիր հոգեւորական բարձր հրամանի հաստատութիւն է, և օրհնութիւն է Յակոբայ ծառայի ծառայից Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ Տեառն մերոյ, շնորհօք և ողորմութեամբ Նորին կաթողիկոս ամենայն Հայկազնեայց հանուրց և Վաղարշապատու"։ Նմանապէս Տէր Կոստանդին Ե. որ ամբարձաւ յաթոռ Հայրապետութեան Ամենայն Հայոց ի Սիս, յամի 1430, ի միում կոնդակի իւրոյ խոստովանի զօլ զանձն կաթողիկոս Վաղարշապատու, յասելն "Կոստանդին ծառայ ծառայից Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ողորմութեամբն Աստուծոյ կաթողիկոս Վաղարշապատու" ևն։ Քանզի երանելի Հայրապետքն գիտելով գիտէին թէ պանդուխտք են ուր և գտանիցին, որպէս և Մեծ Հայրապետն Ամենայն Հայոց Սուրբն Ներսէս Շնորհալի հառաչէր ի Հռոմկլայ ասելով, ". . . զի՞նչ աւարից զի ապրեցի անձն իմ յահագնալուր սպառնալեաց աստի տարակուսելի է ինձ։ Քանզի շրջել առ ամենեսեան ընդ ամենայն կողմունս աշխարհի, և քարոզել զբանն Աստուծոյ՝ անկարելի է։ Եւ քաղաք թագաւորութեան և բազմամբոխ ոչ քոյ ազգի մերում, որպէս զի անդանօր նստեալ յաթոռ Հայրապետութեան և վարդապետութեան ուսուցանէաք ժողովրդեան մերոյ զԱստուածային պատուիրան։ Այլ եմք [illegible] ի Հռոմկլայ բնակելով։"

Զայս այսպէս հաստատեն ամենայն պատմական աւանդութիւնք, որպէս գիտէ և ազգն համօրէն։ կաթողիկոսունք Սսոյ ի 1441 թուականէ անտի ի փոխադրութենէ ասեմք Հայրապետական Աթոռոյն և Գահակալացն ի բուն աթոռատեղի վարդապետութեան Ամենայն Հայոց ի կաթողիկէ տաճարն ի Ս. Էջմիածին, որ ճարտարապետեալն է մատամբ Միածնի բանին, և ուր՝ զաթոռ Հայրապետութեան հաստատեաց Առաքելահաւասար հայրն մեր Ս. Գրիգոր Լուսաւորիչ, անտի և այսր ասեմք կաթողիկոսունք Սսոյ կացին մնացին միայն ի մասնական հովուութեան Հայոց վիճակին Կիլիկիոյ՝ կրելով զանուն կաթողիկոսի Սսոյ և եթ։

Եւ ի վաղնջուց անտի ժամանակաց գահակալք Աթոռոյն Կիլիկիոյ ընդունէին զՄեռոն թագաւորական ձեռամբ Պատրիարքացն Կոստանդնուպոլսոյ, նոյն և զՆուիրակ Պատրիարքարանի ի վաւերացումն պաշտաման, որպէս հաւաստի առնեն մնացորդք գրութեանց նոցա պահեալք ի դիւանս Պատրիարքարանիս և բանք հրովարտակացն արքունի. Ահա, օրինակ իմն, ի թուականին Հայոց ՌՄՀԱ (1822) և ի հոկտեմբերի 5 թեմականք Կիլիկիոյ, Անտիոքայ, Բերիոյ և Քիլիսու, երկոքումբք թղթովք իւրեանց ստորագրեալք յեպիսկոպոս Առաջնորդաց և ի վարդապետաց և ի քահանայից և ի Սարկաւագաց և իշխանաց և յերեցփոխանաց, խնդրեն յԱրժանայիշատակ Նախորդէն մերմէ ի Տէր Պօղոս Սրբազան Պատրիարքէ այսու բանիւ, ". . . սակս առ Աստուած փոխման Սրբազան Հօր մեր հոգեւորի Աստուածընտիր Կիրակոս կաթուղիկոսին, դիմեմք արտասուաթոր աչօք և հայցեմք մեծաւ յուսով զի շնորհեսցես մեզ հովիւ հոգեւոր և այցելու զԱջորդն Նորին զՏէր Եփրեմ Աստուածարեալ Արքեպիսկոպոսն զգէտն Բերիոյ զընտրեալն յԱստուծոյ և ի մերոյս հասարակութենէ յաթոռականացս և ի վիճակաւորացս . . . հանելով [illegible] քոյդ Գերապատիւ մեծի Տէրութեան . . . .» Իմիւսում նամակի եւս գրեն այսպէս. «խնդրեմք աղերսանօք զի [illegible] մեզ հովիւ և Տէր հոգեւոր (զԵփրեմ Արքեպիսկոպոսն) [illegible], և բարձու իշխանութեանց կոնդակաւ. հաճութեամբ բոլոր մեծայարգ և Աստուծով զօրացեալ պերճափայլ իշխանաց», եւայլն։

Տէր Միքայէլ Բ. կաթողիկոս Սսոյ ի գրութեան իւրում որ յ12 ամսեանն նոյեմբերի 1848 ամի, ինքնաբերաբար խոստովանի զանձն լինել ընդ իրաւասութեամբ Պատրիարքութեան Կոստանդնուպոլսոյ, որ փոխանորդն է ի Տաճկաստան Հայրապետին ամենայն Հայոց, և այսպէս ասէ. «միայն թէ գտցի ոմն իմիք Աթոռոյս [illegible] ի ձեռնադրութիւն Եպիսկոպոսի, և ի յօրհնութիւն Սրբոյ միւռոնի, և նոյն կաթողիկոսն բաւականասցի իւր ամսականաւն միայն, ըստ հաճոյից բարեկարգ ժողովոց» (Կ. Պոլսոյ)։

Սակայն յաջորդն նորա և նախորդն Ձեր Տէր Կիրակոս Բ. առաւելագոյն եւս վառեալ ոգւով ճշմարտութեան և շահուց եկեղեցւոյ Հայաստանեայց կնքէ կանոն և գիր դաշնագրութեան մետասան յօդուածովք յամի Տեառն 1856 ի հնգետասան աւուր ամսեան յուլիսի, որոյ մետասաներորդ վերջին յօդուածն է այսպէս,

" Որովհետև Միածին Որդին բանն Աստուած էջ ի յԱյրարատ

ԹԵՐԹՕՆ ՄԱՍԻՍԻ

(108)

ԷՔԹՈՐ ՄԱԼՈՅ

—o—

ԸՆՏԱՆԵԶՈՒՐԿ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

11.

ԺԵՐՈՄ ՊԱՐՊԸՐԷՆ

թիւն քաղէի. ի՜նչ մեծ մխիթարութիւն էր ինձ մտածել թէ՝ քիչ յետոյ պիտի տեսնէի անոր քաղցր և զուարթ աչերն։

Ժամ եօթնէն քիչ մ'առաջ ուրախալից հաչիւն մը լսեցի, և իսկոյն մութին մէջ սպիտակ մարմին մը տեսայ որ իմ վրայ կու գար. խորհրդածելու ժամանակ չմնաց, Քափի՝ ծունգերուս վրայ ցատկելով՝ ձեռներս կը լզէր. ես ալ թեւերուս մէջ զայն գրկելով՝ ցռուկը պագի։

Շատ չանցած Մաթիա ալ երեւցաւ.

— Է. ի՞նչ լուր, գոչեց հեռուէն։

— Պարպըրէն մեռեր է։

Մաթիա վազելով քովս եկաւ. քանի մը խօսքով պատմեցի անոր ինչ որ ըրած, և ինչ որ իմացած էի։

Յայնժամ այնպիսի ցաւակցութիւն մը յայտնեց որ յոյժ քաղցր եկաւ սրտիս, և զգացի որ թէեւ իրեն համար կը վախնար ընտանիքէս, բայց և այնպէս անկեղծութեամբ կը բաղձար ինձ համար, որ ծնողքս գտնէի։

Սիրալիր խօսքերով ջանաց մխիթարել զիս և մանաւանդ համոզել թէ պէտք չէր յուսահատիլ։

— Եթէ ծնողքդ կրցին գտնել զՊարպըրէն, անշուշտ անհոգ չպիտի կենան երբոր լուր մը չստանան անկէ. պիտի փնտռեն զայն և բնականաբար Քանթալի պանդոկը պիտի երթան հարցնեն. երթանք ուրեմն Քանթալի պանդոկը, շատ շատ՝ քանի մ'օր պիտի սպասենք։

Զայս ըսած էր ինձ նաեւ դողդոջուն գլխով պառաւը, սակայն Մաթիայի բերնին մէջ այս խօսքերն ուրիշ կարեւորութիւն մ'ստացան ինձ համար. արդարեւ խնդիրն յապաղման մը վրայ էր. ո՜րչափ տղայութիւն ըրած էի այն աստիճան տրտմելով և յուսահատելով։

Յայնժամ, սիրտս քիչ մը հանդարտելով, պատմեցի Մաթիայի, ինչ որ իմացած էի կարոֆոլիի վրայ։

— Տակաւին երե՛ք ամիս, գոչեց։

Եւ սկսաւ երգել ու խաղալ փողոցին մէջ։

Յետոյ յանկարծ կանգ առաւ և քովս գալով.

— Ո՜րչափ իրարմէ տարբեր են երկուքիս ընտանիքը. դու կը ցաւէիր քուկինդ կորուսած լինելուդ համար, ես ալ ահա կ'ուրախանամ իմինս կորուսած լինելուս վրայ։

— Մօրեղբայր մը, ընտանիք չէ, այսինքն կարոֆոլիի պէս մօրեղբայր մը. եթէ Քրիսթինա քոյրդ կորսնցուցած լինէիր, կը պարէի՞ր այդպէս։

— Ո՜հ, մի՛ ըսեր զայդ։

— Կը տեսնես։

Գետափէն գնացինք Օսթերլիցի Բասամն. և որովհետեւ աչերս սրտայուզութեամբ մթագնած չէին, կրցի տեսնել թէ որչափ գեղեցիկ է Սէն գետը գիշերայն, երբոր լուսինն իւր արծաթափայլ շառաւիղները զարկած է անոր ակնախտիղ ջուրերուն վրայ իբրեւ անհուն շարժական հայելւոյ մը։

Քանթալի պանդոկը թերեւս պարկեշտ տուն մ'էր, բայց գեղեցիկ չէր. և երբ փոքրիկ ծխաշունչ կանդեղով մը, ձեղնայարկին մէջ խցիկ մը տարուեցանք, այնչափ նեղ էր, որ երկուքս մին անկողնին վրայ նստած ժամանակ միւսն ոտքի վրայ կենալու պարտաւորուած էր. չկրցի արգիլել զիս մտածել թէ այսպիսի սենեկի մը մէջ պառկիլ չէր որ կը յուսայի, և թէ՝ դեղնած բամպակէ վերմակներն ո՜րչափ քիչ կը նմանէին այն գեղեցիկ խանձարուրներուն որոց վրայ այնչափ խօսած էր ինձ Մայր Պարպըրէն։

Իտալական պանիրով ցամաք հացն, որով ընթրեցինք, նոյնպէս չէր նմաներ այն չքեղ ճաշին զոր կերեւակայէի ընծայել Մաթիայի։

Բայց վերջապէս ամեն յոյս կորած չէր. սպասել միայն հարկ էր։

Եւ այս մտածութեամբ ննջեցի։

12.

ԽՈՅՋ

Հետեւեալ առաւօտուն, նամակ մ'սկսայ գրել Մայր Պարպըրէնի՝ իմացածս անոր հաղորդելու համար, և փոքր աշխատութիւն մը չէր։

Ի՞նչպէս պիտի ըսէի իրեն պաղ կերպիւ թէ՝ այրը մեռած էր։ Իւր Ժէրոմին վրայ սէր ունէր. երկար տարիներ ի միասին ապրած էին, և պիտի վշտանար եթէ ցաւակցութիւն չյայտնէի։

Վերջապէս, դէչ աղէկ և անդադար կրկնուած սիրոյ հաւաստիներով, Թուղթիս ծայրը հասայ։ Աւելորդ է ըսել, թէ ակնկալութեանս ի դերեւ ելնելուն և ներկայ յոյսերուս վրայ ալ գրեցի։ Ճշմարիտն ըսելով, առաւել ասոր վրայ խօսեցայ։ Եթէ ընտանիքս իրեն նամակ գրէ Պարպըրէնի վրայ լուր ստանալու համար, կ'աղաչէի որ անմիջապէս իմացնէ ինձ, մանաւանդ իրեն տրուելիք հասցէն ինձ հաղորդէ՝ Քանթալի օթեւանը դրկելով։

Այս պարտականութիւնս կատարելէ յետոյ, ուրիշ մ'ալ ունէի կատարելու՝ Լիզի հօրը նկատմամբ, և այս ալ դժնդակ էր ինձ, գոնէ ինչ ինչ նկատմամբ։ Երբոր Տրէօզի եղած ժամանակս ըսեր էի Լիզի թէ Փարիզի մէջ առաջին անգամ դուրս ելնելուս պիտի երթայի իւր հայրը տեսնէի բանտին մէջ, հասկցուցեր էի որ, եթէ՝ ինչպէս կը յուսայի՝ ծնողքս հարուստ էին, պիտի խնդրէի իրենցմէ որ հօրը պարտքը վճարէին, այնպէս որ բանտը գնացած ժամանակս ուրիշ բան չպիտի ընէի բայց եթէ բանտէն հանել ու հետս տանիլ։ Այս ալ իմ ուրախական ծրագրիս գլխաւոր կէտերէն մին էր։ Նախ հայր Ագէօն, յետոյ Մայր Պարպըրէն, ապա Լիզ, Էթիէնէթ, Ալէքսի, Պէնժամէն։ Գալով Մաթիայի, ինչ որ ինձ համար ընէին, նոյնը պիտի ընէին նաեւ անոր համար, և նա ալ ինձ պէս երջանիկ պիտի լինէր։ Ի՜նչ պատրանք, բանտ երթալ ունայնաձեռն և տեսնել հայր Ագէօն, այնչափ անկարող ծառայութիւն մ'իրեն ընելու և երախտագիտական պարտքս հատուցանելու՝ որչափ անկարող էի երբոր առաջին անգամ բաժնուեցայ իրմէ։

Բարեբախտաբար մխիթարական խօսքեր ունէի տանելու, ինչպէս նաեւ Լիզի և Ալէքսիի համբոյրներն, և իւր հայրական ուրախութիւնը պիտի մեղմացնէր իմ կսկիծս. այնպէս որ փոքրիկ ծառայութիւն մը իրեն ըրած լինելու գոհունակութիւնը պիտի ունենայի, սպասելով որ աւելի մեծ ծառայութիւն մը կարենամ ընել։

Մաթիա, որ բանտը տեսնելու սաստիկ փափաք ունէր, հետս եկաւ. միանգամայն կը փափաքէր տեսնել այն մարդն, որ երկու տարիէն աւելի ժամանակ հայրութիւն ըրած էր ինձ։

Եւ որովհետեւ Քլիշիի բանտը մտնելու ճանբան սորված էի, առաջին անգամուն պէս երկար չսպասեցինք անոր մեծ դրան առջեւ։

Մեզ խօսարան մը մտցուցին, և շատ չանցած հայր Ագէօն հոն եկաւ. և ձեռքն ինձ երկնցուց դրնէն։

— Ա՜հ, բարի տղայ, ըսաւ համբուրելով զիս, քա՜ջ Ռեմի։

Իսկոյն լուրեր տուի Լիզէն և Ալէքսիէն. յետոյ, երբոր կ'ուզէի հասկցնել թէ ի՜նչ պատճառաւ Էթիէնէթը տեսնելու չէի կրցած երթալ, զիս ընդմիջեց.

— Եւ քու ծնո՞ղքդ, ըսաւ.

— Գիտեք ուրեմն.

(Շարունակելի)

ոսկի ուսամբն հարկանելով զերկիր նշանագրեաց տեղին լուսանկար զառաջին եկեղեցին ազգիս Հայոց՝ ուստի առաջաւ անուն Էջմիածին, վասն որոյ լրութիւն Ազգիս Հայոց ըստ Աստուածային յայտարարութեան զնա ճանաչէ Գլուխ և Մայր Աթոռ, յէ և Գահակալք Նորին Լուսաւորչեան Ս. Աթոռոյ ի ժամանակս Թագաւորութեան Հայոց աստանդական տարաշրջութեամբ երթային ընդ Թագաւորի, և ի տեղւոջ տեղւոջ Հայրապետանոց հաստատեցին, բայց ի բառնալ խապառըսպուռ Թագաւորութեան Հայոց յամենայն տեղեաց՝ յանկացաւ Ս. Էջմիածին ընել Մայր Աթոռ և Հայրապետանոց [illegible] · զայս այսպէս ճանաչելով [illegible] Գահակալն Լուսաւորչեան Մայր Աթոռոյ Սրբազնակատար կաթողիկոսի ամենայն Հայոց, և միամ ընդ կամօք և ընդ հրամանաւ Նորին վեհափառի յամենայն ժամ և յամենայն դէպս » ·

Զայս քանիցս յայտարարեալ է ինձ նոյն արժանայիշատակ Նախորդըն Ջեր Տէր Կիրակոս, պատրաստ ցուցանելով զանձն ընդունելոյ զամենայն կարգադրութիւնս զոր առաջէ կեդրոնական վարչութիւնն, և ընդունելով զնախագահութիւն Էջմիածնի · Որպէս և մեք յորժամ զառաջին եպիսկոպոսական պատարագն մատուցանէաք ի Ս. Տաճարին Սսոյ, սովին գաշամբ յիշեցաք նախ զանուն կաթողիկոսի ամենայն Հայոց Տեառն Մատթէոսի յամին 1862 ի ներկայութեան անդ Տեառն Կիրակոսի, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի ·

Այսպէս և Ջերդ Սրբազնութիւն մինչ ի մայրաքաղաքիս գտանէր, ընկալեալ զԾրագիր բարեկարգութեան Աթոռոյն Կիլիկիոյ, որ առաջարկութեամբ և խորհըրդակցութեամբ Ջերով խմբագրեցաւ, ձեռնագրեալ դարձոյց առ մեզ առանձին գրութեամբ, որ ի 26 ամսեանն հոկտեմբերի 1881 ամի, յորում ասէ,

«Ազգային վարչական խորհըրդոյ կողմանէ և մեր հաճութեամբ կազմեալ Յանձնաժողովին աշխատասիրած Կիլիկիոյ կաթողիկոսութեան վերաբերեալ ծրագիրն՝ զոր Սրբազնութիւնդ ղրկած էր առ մեզ, ընթերցաք, և հաւանելով ստորագրեցինք ·»

Եւ յառաջնումն յօդուածի ծրագրին այնորիկ գրեալ կայ այսպէս,

Յօդ. 1. «Ս. Էջմիածնի Մայր Աթոռոյ Գահակալն լինելով միայն ընդհանրական Հայրապետ Ամենայն Հայոց, որոյ ընտրութեան կը մասնակցին նաև Կիլիկիոյ Թեմականք, Տանն Կիլիկիոյ կաթողիկոսն ճանչցած է, կը ճանչնայ և պիտի ճանչնայ Նորա գերագահութիւնը » ·

Եւ յերկրորդումն յօդուածի վերոյին յիշատակեալ է Հայրապետն Ամենայն Հայոց և գերագահութիւն նորա · Ապա ուրեմն և Ջերդ Սրբազնութիւն ի 22 և ի 26 ամսեանն հոկտեմբերի 1881 ամի հաւանութեամբ իւրով և կրկնակի ձեռնագրաւ ծանեաւ եթէ կաթողիկոսն որ ի Ս. Էջմիածին, է «միայն ընդհանրական Հայրապետն Ամենայն Հայոց » ·

Եւ ըստ այսմ յայնժամ և այսըր բարձան ամենայն [illegible] բանք անախորժք, մինչդեռ բանքդ այդքիկ ասացեալ են յառաջ քան զստորագրութիւն Ջեր զայս, վասն որոյ աւելորդ իմն էր յիշատակել զբանսն զայնոսիկ, իբրու թէ նոր ինչ իցեն, և թէ Ազգըն հաւան գտանիցի ընդ այդ ·

Զիա՞րդ ուրեմն, վանականդ ժողով մտաբերէ այսօր հանել հերձուած հակառակելով ոչ միայն բաղմադարեան ազգային ընդհանուր կամաց և պատմական աւանդութեանց, այլ և կամաց Նախորդաց Ջերոց, և որ ցաւալին ևս է, հակառակելով և Ջերումդ իսկ ձեռնագրի ի նախայիշատակեալ ծրագրին, զոր յետ կնքելոյ մատուցէք զՍուրբ Պատարագն յեկեղեցւոջ Ս. Երրորդութեան որ ի Կոստանդնուպօլիս, և անդ առաջի խուռներթաց ժողովրդեան որ եկեալ էր լսել զհանդիսաւոր խոստովանութիւն Ջեր, քրիստոնէական ոգւով քարոզեցէք զԱթոռն Սրբոյ Էջմիածնի լինել Առաքելական Աթոռ Հայաստանեայց եկեղեցւոյ · Եւ ի պահու աղօթից յիշատակութեան ահաւոր խորհրդոյ անդ, յիշատակեցէք զՏէր Գէորգ կաթողիկոսն (որ կենդանի էր յայնժամ) իբրև ընդհանրական կաթողիկոս Ամենայն Հայոց · Սոյն այս յիշատակութիւն եղեալ էր յառաջագոյն հանդիսապէս յաթոռանիստ Տաճարին Սսոյ առաջի Ջեր ի Սուրբ Պատարագին յաւուր օծման Ջերոյ ի կաթողիկոսութիւն Տանն Կիլիկիոյ ·

Եւ յառաջ քան զայս ամենայն, յաւուր ընդունելոյ Ջեր զձեռնադրութիւն եպիսկոպոսական աստիճանի ի Մայր Աթոռն անդ Ս. Էջմիածնի, ուխտեալ է Ջեր, թղթեալ և ձեռագիր ընդունելոյ զԳահակալն Նորին լինել «եպիսկոպոսապետ և Ծայրագոյն Պատրիարք համազգական նախամեծար Աթոռոյ Արարատեան Մայր Եկեղեցւոյ Սրբոյ կաթողիկէ Էջմիածնի և կաթողիկոս Ամենայն Հայոց » · Զայն Ջեր ուխտ ի գործ եղեալ է Ջեր անտի և առ յապա ի բազմամեայ եպիսկոպոսութեան Ջերում, յիշատակելով միշտ ի Սուրբ Պատարագի զանուն ընդհանրական Հայրապետի Ամենայն Հայոց · Ահա, ցայսօր Սրբազնութիւն Ջեր ստորագրէ իբրև միաբան եպիսկոպոս Ս. Էջմիածնի, եթէ միաբան էք, որպէս և էքդ, ապա ուրեմն պարտիք հաւատարիմ մնալ Ուխտի Ջերում, և անվթար պահպանել զխոստումն Ջեր · ճանաչելով զԳահակալն Արարատեան Ս. Աթոռոյ ընդհանրական կաթողիկոս Ամենայն Հայոց ·

Ցաւացեալս ասեմ քաջայայտ երևի՝ թէ սխալ է մեծապէս վանականդ ժողով ոչ միայն ընդհանրական կաթողիկոսութիւն անուանելով զԱթոռն Սսոյ, այլ և համարձակելով ասել, թէ Ս. Աթոռն Արարատեան բաժանեալ իցէ ի Սսոյ, զորոյ աթոռն պահեաց և պահէ ցարդ ազգն իբրև աւանդ իմն այնպիսի ժամանակաց և պարագայից, զորս ոչ ստեղծ ինքն, և սակայն պատկառ կայ այնոցիկ հետևանս շրջակայեցութեամբ եւեթ · Այլ ազգն կամեցաւ և կամի զի և Աթոռն Սսոյ ոչ զիրաւունս եւեթ, այլ և զպարտիս իւր գիտասցէ, քանզի այսու միայն մարթիցի պահպանել զներդաշնակութիւն և զմիութիւն Հայաստանեայց Եկեղեցւոյ ·

Վանական ժողովդ ի տեղեկագրի իւրում ասէ, «ոչ ոք ի հոգելոյս կաթողիկոսաց Սրբոյ Աթոռոյս մասնակցած է ընտրութեանց Ս. կաթողիկոսաց Արարատեան Ս. Աթոռոյ · · · ի 1866 ամի կատարեալ ընտրութեան Տ. Գէորգայ Դ. ի հանգուցեալ կաթողիկոսի ևս չեն մասնակցած ոչ կաթողիկոսութիւնն, ոչ միաբանութիւնն, և ոչ թեմականք Կիլիկիոյ, քանզի 30 սեպտեմբերի 1865 ամի ի Տէր հանգուցեալ էր հոգելոյս Նախորդն Ջերդ վեհութեան Տ. Կիրակոս Բ. Ս. կաթողիկոսն Կիլիկիոյ, և ի 1866 ամի միաբանութիւնն Ս. Աթոռոյս ի վիճակս էր ցրուեալ, և ոչ գոյր աստ ի Ս. Աթոռս՝ ոչ կաթողիկոսական փոխանորդ կամ տեղապահ, և ոչ իսկ Սինոդ կամ այլ պաշտօնական մարմին » ·

Ցաւալի է զի վանական ժողովդ անգիտանայ զքաղաքական հանգամանս վիճակին Կիլիկիոյ յաւուրս բռնակալութեան Քօզան-օղլու ցեղին որ ապստամբեալ յՕսմանեան պետութենէն ընդ լծով իւրով կաշկանդէր նաև զԱթոռն Սսոյ, և առաւել ևս ընդ այն ցաւ է մեզ, զի վանականդ ժողով և ընդ նմին Ջերդ Ամենապատուութիւն մոռանայ զի ընտրութիւն և հաստատութիւն Ջեր յԱթոռ Սսոյ՝ ոչ ըստ եղանակի ժամանակի խօզանեանց կատարեցաւ, այլ ըստ վճռոյ Ազգային Երեսփոխանական Ժողովոյ Հայոց Թուրքիոյ · Յուշ ածեմ Ջեզ զի յընտրութիւն Հայրապետի ամենայն Հայոց յամի Տեառն 1866, ըստ որոշման Ազգային Երեսփոխանական ժողովոյ, Աթոռն Կիլիկիոյ մասնակցեցաւ, և ես ինքն էի յայնժամ, որպէս գիտէք, փոխանորդ Աթոռոյդ ընտրեալ ի կաթողիկոսական Տեղապահէ Աթոռոյն, և յանուն վիճակիդ մասնակցեցայ յընտրութիւն կաթողիկոսին ամենայն Հայոց թէ՛ յեկեղեցական վիճակային ժողովի և թէ՛ յԱզգային Երեսփոխանական ընդհանուր ժողովի, զիա՞րդ ուրեմն իշխէ վանականդ ժողով գրել թէ 1866 ամի կատարեալ ընտրութեան Տ. Գէորգայ Դ.ի հանգուցեալ կաթողիկոսի ևս չեն մասնակցած ոչ կաթողիկոսութիւնն, ոչ միաբանութիւնն և ոչ Թեմականք Կիլիկիոյ · «Եւ զիա՞րդ մանաւանդ իշխէ ևս ասել թէ՝ միաձայն հաւանութեամբ որոշեցինք որ Ս. Աթոռս իւր Գահակալովն և Թեմականներովն բնաւ չմասնակցի ընտրութեան Ս. Կաթողիկոսի Արարատեան Ս. Աթոռոյ,» և զհրաւէր մեր ի մասնակցութիւն ընտրութեան Նորոյ Հայրապետի Ամենայն Հայոց «նորաձևութիւն» կոչել ·

Միթէ Տունն Կիլիկիոյ չիցէ՞ մասն Հայաստանեայց եկեղեցւոյ և Ազգիս Միթէ ուրո՞յն ազգ իցէ Տունն Կիլիկիոյ և եկեղեցի · Ցանդգնեցի՞ վանականդ ժողով ասել թէ Աթոռն Սսոյ բաժանեալ իցէ յազգութենէ և յեկեղեցւոյ Հայաստանեայց · Ուրեմն առ ի պահել զմիութիւն եկեղեցւոյ և զներդաշնակութիւն սիրոյ յամենայնի ըստ օրինակին 1866 ամի, և ըստ վճռոյ Ազգային Ընդհ. Ժողովոյ թէ Ամեն. Սրբազնութիւն Ջեր, և թէ Սրբազան Եպիսկոպոսունք և Առաջնորդք և Վանահարք որոց միաբանութիւն իցէ վիճակիդ, որք անցեալ են անխտիր յընդհանուր ցուցակի ընտրելեաց ի կաթողիկոսութիւն Ամենայն Հայոց, պարտին մասնակցիլ յընտրութիւն Հայրապետի ամենայն Հայոց, որպէս Թեմական ժողովուրդք Աթոռոյդ երեսփոխանօքն իւրեանց, յԱզգային ժողովի մասնակցին ի նոյն ընտրութիւն · Քանզի վիճակք Կիլիկիոյ և Աթոռ նորա ոչ կազմեն բնաւ անջատ ինչ Թեմ կամ ուրոյն եկեղեցի, այլ մասն մարմնոյ են Սրբոյ Եկեղեցւոյ Հայաստանեայց ընդ միով գերագահ Հովուապետաւ Առաքելական Աթոռոյ կաթողիկէ Սրբոյ Էջմիածնի ·

Այս իրաւունք են Ջեր, և այս պարտիք, յորմէ խուսափել չկարէք որով և իցէ պատճառանօք և վարկպարազի գրութեամբ վանական ժողովոյդ · Գիտէ քաջ Ջերդ Սրբազնութիւն զկարգս և զկանոնս Սրբոյ Եկեղեցւոյ Հայաստանեայց և զպիտոյս նորա բազմազանս ի ժամանակի աստ յայսմիկ, վասն որոյ պարտք են մեզ ամենեցուն հաստատուն պահել զկապ միութեան Սրբոյ Եկեղեցւոյս, և ի բաց թողուլ զամենայն հակառակաբանութիւնս որ ի խաւար ժամանակաց և ի քաղաքական դժխեմ պարագայից ծընունդ առեալ են · Թեմականք Կիլիկիոյ և Աթոռ նորա յայս մեր ամենեցուն են որդիք Առաքելական և Սուրբ Եկեղեցւոյս Հայաստանեայց · ուստի և յայսմ բարեպատեհ առթի մասնակցութիւն Ջեր յընտրութիւն Հայրապետին Ամենայն Հայոց բարձցէ զամենայն տարապարտ կարծիս և կասկածանս, և զօրացուսցէ զեկեղեցին Հայաստանեայց ընդդիմամարտ լինել ամենայն չարեաց որ ի ներքուստ և յարտաքուստ, և պահել ամրակուռ ընդհովանեաւ իւրով զորդիս իւր հաւատարիմս վտարանդիս ի սփիւռս աշխարհի ·

Արդ՝ Սրբազան Եղբայր, մի յիշէք զբանս և զգիրս՝ որք արծարծեն զբոց կամ զհուր հակառակութեան, և ընդլայնեն զխրամ անջատման, գրուածք և ընթացք կրիւք լի՝ մատուցանեն հանապազ փաստս անարդարանալի հակառակութեանց, ուստի ի բաց թողեալ զայսպիսիս ամենայն, մեք ամենքեան աղաչեսցուք զՏէրն մեր Յիսուս Քրիստոս զմիակ գլուխն Սրբոյ Եկեղեցւոյ, զի լցուցեալ Հոգւովն իւրով սրբով տացէ մեզ ամենեցուն զոգի սիրոյ և միութեան, և առաջնորդեսցէ մեզ յընտրութիւնս յայս, որպէս զի լիցի եկեղեցւոյն տեսանել զաւուրս բարեաց, շինութեան և պայծառութեան ի փառս իւր, որ է օրհնեալ յաւիտեանս ամէն ·

Մնամք Ամենապատիւ Սըրբազնութեան Ջերում
Աղօթակից Եղբայր
ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

Ի 6 մարտի 1884
Ի Պատրիարքարանի Հայոց
Կ. Պոլիս ·

Ամենապատիւ
Տ. Մկրտիչ Սրբազան կաթողիկոս
Տանն Կիլիկիոյ ի Սիս ·

ԱՌ ԳՐԱՍԷՐ ԱՏՈՄ

Սկիւտար, 10 մարտ 1884,

Գեղեցիկ նամակ մ'է այն զոր ուղղած էք ինձ Մասիսի միջոցաւ, պատուական եղբայրակից · գեղեցիկ նամակ, հոծ և խիտ փիլիսոփայական խորհրդածութեամբք, · · · այլ ոչ փիլիսոփայական ոգւով գրուած, զի փիլիսոփայն կը վարդապետէ, բայց չի բարկանար · Թո՛ղ տուք որ ըսեմ, մեծապէս զարմացայ տեսնելով որ «կրից դէմ կռիւ» կը ցուցնէք · Դուք կը պահանջէք յինէ որ գիշերային խաղաղութեան և հանդարտեան պահուն՝ երբ գող մը մտնէ յանկարծ իմ սենեակս, անխռով և ժպտուն կերպարանօք ընդ առաջ ելնեմ նորօրինակ այցելուին և ըսեմ · «Ծառայ եմ, մեծապատիւ տէր, ի՞նչ կը հրամայէք» · Ես չունիմ այս գերբնական հանդարտութիւնս, ո՛ Գրասէր Ատոմ, զի ես փիլիսոփայ չեմ, այլ մա՛րդ, և մարդ զգածւե՛լ տկարութեամբ · Տ. Նուպարեանի հարուածն՝ անամպ երկնից մէջ չանթ մ'եղաւ ինծի համար · Ինչուշտ եթէ Նոր-Տոմ Բոլէն թարգմանութիւնն քովս դնուէր ի ժամանակին յորում ընդունեցայ Ֆրանսերէն–Հայ աշխարհիկ բառարանին ձախող Ցայտարարութիւնն, եթէ կրցած ըլլայի ճշգրտին կերպով գնահատել Տ. Նուպարեանի արժէքն իբրև հայերէնագէտ և իբրև գաղղիերէնագէտ, փոխանակ կատաղութեան ճիչ մ'արձակելու և իմ գրութեանս վերնագիր դնելու Բոլէ է Սոտոհոլէ, Հոմերոսի աստուածոյ մը պէս կը ծիծաղէի մեծաձայն և կը վերնագրէի իմ յօդուածս Բոլէ է Սոտոհոլէ · Ի սրտէ կը խնդակցիմ ձեզ որ յառաջ քան զիս ուղիղ և արդար տեսութեամբ յայտներ էք ձեր կարծիքն Տ. Նուպարեանի բառարանին վրայ Գրական իմաստասիրական շաբաթ ամսաթերթին առաջին թուոյն մէջ · «Նոր բառագիրն իր նախորդներն յոյժ ստուգութեամբ կը դատէ · սակայն այդ Ցայտարարութեան իմաստներէն և խմբագրութեան ոճէն՝ ամենադերագանց գործ մը չեմ գուշակեր ես, որպէս կը խոստանայ հմուտ այլ յանդուգն հեղինակն» · Աւելի ճարտարութեամբ և աւելի ստատկութեամբ չէիք կրնար դատապարտել Տ. Նուպարեանի հայերէն ոճն · մէկ կէտի մէջ միայն կը վրիպիք, երբ կը կոչէք Նոր բառարանին հեղինակը «հմուտ» և «մեծ հմտութեան տէր երիտասարդ» · Թուի թէ չէք կարդացած իւր Նոր-Տոմը ·

Ձեր նամակն՝ թէպէտ և յոյժ գեղեցիկ՝ բնաւ չգոհացուց զիս, եղբայր, վասն զի դուք ինծի չէք պատասխաներ, այլ մտացածին անէ և անգոյ հակառակորդի մը որ «կը թշնամանէ և կ'ատէ աշխարհաբարը, որ արձագանգ է միջինդարեան գաղափարներու, որ Կ. Պոլսոյ և Զմիւռնիոյ գրագէտներէն գովեստ կը մուրայ, որ խուլ և անողոք ատելութիւն կը տածէ անոնց դէմ որ կը մշակեն աշխարհիկ լեզուն » · Որչափ բառ, այնչափ սխալ ·

Կ'աղաչեմ վերստին կարդալ առաւելագոյն ուշադրութեամբ իմ Բոլէս · Ի՞նչ ըսի ես · «գրաբարին աճիւնէն ոչ թէ փիւնիկ մ'է որ կը վերկենցաղի» · աճիւնն՝ կենդանւո՞յ է թէ մեռելոյ, կրնա՞մ ես մեռելոյն կենդանութիւն պարգևել · Ես Գրաբարեան կը կոչեմ զիս, բայց իմ մտացս մէջ Գրաբարեան չի նշանակեր գրաբար լեզուն յարուցանելու հետամուտ, այլ գրաբար ուսանող, գրաբար մշակող · նոյնպէս երբ կ'ըսեմ Աշխարհաբարեան, չեմ հասկընար աշխարհաբար գրականութեան պարապող, այլ աշխարհաբար լեզուն գրաբարի պէտք չունի կարծող · Ի՞նչ ըսի դարձեալ · «Աշխարհիկ լեզուն՝ գրաբարի ուսմամբ և Նախնեաց մատենագրութեանց ընթերցմամբ միայն կրնայ մաքրուիլ և վայելուչ ձև զգենուլ · գրաբար պէտք է ուսանինք, որպէս զի յստակ և ձևաւոր աշխարհաբար գրենք» · միթէ հայհոյութի՞ւն մ'է այս ընդդէմ Լիդրէի, ընդդէմ [illegible], ընդդէմ Ցարուինի, ընդդէմ Սեբէնքերի · Նոյն բանն ըսած չէ՞ և Հ. Այտընեան իւր քննական Քերականութեան մէջ, երես 312. «Գրաբարն անհրաժեշտ հարկաւոր է ոչ միայն գրաբարի համար, այլ մանաւանդ աշխարհաբարի համար ալ · Աւելորդ է հոս ճառ մը խօսիլ աշխարհաբարին գրաբարի հետ ունեցած կապակցութեանը և մանաւանդ անհամար կարօտութեանց վրայ՝ որոնք արդի լեզուն գրաբարէն պիտի լեցնէ, որմէն ինչպէս իւր ծնունդն առած է, նոյնպէս դեռ իւր զարդարանքը մանաւանդ թէ դեռ հոգին ու շունչը կ'առնու · · · : Առանց գրաբարի՝ նոր լեզուին այլ և այլ չառաւիղներուն կենդրոնն ու զօդիչն է, հարկ է որ նախ իսկական անիշխանութիւն տիրէ գործողներուն զանազան ուղղութեանցը մէջ, որուն կից հետևորդ է քայքայումն, երբ իւրաքանչիւր ըստ մտի կամաւոր գործութեան մէջ մէկ նոր խանգարում աւելցնէ · Իսկ մեզի ամէն բանէ յառաջ այն կապը պէտք է՝ որ բազմութեան մէջ միութիւն, և միութեան մէջ զօրութիւն յառաջ կը բերէ · · · : Նոր լեզուին մը բոլոր ձևը հնոյն մէջն է, և հինն ուսուցանէ նորոյն լեզուն · Ուստի կրնանք մեզի հաստատուն առած մը կազմել · Եթէ կ'ուզես աշխարհաբար աղէկ գրել, գրաբար պէտք է գիտնաս · Եթէ կ'ուզես աշխարհաբար լաւ ու հիմնովին գրել, գրաբար պէտք է ալ լաւ ու հիմնովին գիտնալ · Մանաւանդ թէ նոյն իսկ աշխարհաբարը հիմնովին հասկընալու համար հարկ է գրաբար գիտնալ · Թող տաղաչափութեան մասն ալ՝ որուն կազմութիւնն ըստ իմիք գրաբար կրնայ ըսուիլ · Հանապազօրեայ փորձն ամէն տեղ կը ցուցընէ թէ ի՛նչչափ յորդորող պէտք է ըլլայ անոնց ամեն քայլափոխը · ինչչափ երկբայական անոնց յաջողութիւնը՝ որոնք հինը հիմնովին չեն ճանչնար, և ո՛րչափ յաճախ իրենց բազմապատիկ կարօտութեանցը մէջ աջ կամ ձախ կը սայթաքին՝ առանց ընելիքնին որոշ գիտնալու · Մէկ խօսքով կրնանք համարձակ հաստատել թէ այսօրուան օրս առանց գրաբարի աշխարհաբար չըլլար · · · : Եթէ նոր մատենագրութիւնն ստուգիւ գործարան մըն է՝ ուր լեզուն պիտի գործէ ու գործուի, նոյն գործարանին նիւթ մատակարարողը, անոր բովքը՝ գըրաբար լեզուն է և գրաբար մատենագրութիւնը · առանց բովուց գիտութեան, առանց նիւթոյն տարերքը տեսականապէս և հիմնովին ճանչնալու՝ կա՛մ արուեստին մէջ կը սխալինք, և կամ առ առաւելն եգած տեղերնիս կը մնանք՝ առանց յառաջադիմութեան փոքր շարժում մ'ընելու »

Ահաւասիկ փառաւոր վկայութիւն մը գրաբար լեզուի ուսման անհրաժեշտ հարկին · կը տեսնէք, Գրասէր Ատոմ, թէ ինչպէս հասկցեր և թափանցեր եմ Հ. Այտընեանի քննական քերականութիւնը, և դուք ո՛րչափ անիրաւ էք երբ կը կոչէք զիս տխմար · Դիտմամբ կը գրեմ տխմար բառը, վասն զի ես կլոր ածականը նախամեծար կը համարիմ քան զերկայն չրջաբանութիւնը · երեսուն տարի անընդհատ հայերէն լեզու ուսանողի մը «Հ. Այտընեանի քերականութիւնն ոչ հասկցած և ոչ թափանցած ես» ըսելը՝ պարզ հայերէնով «տխմար ես» ըսել է ·

Ես աշխարհաբարը ոչ կը թըշնամանեմ և ոչ կ'ատեմ · ես բոլայերէնէն կը խորշիմ և կը զարշիմ · Բոլայ են այն ամէնքը որ Նախնեաց մատենագրութիւնքը կ'արհամարհեն՝ տէրտէրոշ և տիրացուի գործ և ընթերցարան կոչելով, և ինքնահնար այլանդակ անճոռնի բառերով և ոճերով Հայերէն լեզուն հայութենէ կը հանեն · Ես խուլ և անողոք ատելութիւն չեմ տածեր ձեզի դէմ, սիրեցեալ Ատոմ, վասն զի դուք «կը յարգէք ու կը սիրէք գրաբարի հին և նոր ոսկեղեղու մատենագիրներն», ինչպէս կը գրէք յոյժ վայելչաբար · Ես չեմ պարսաւեր ոչ Տ. Կ. Իւթիւճեանի, ոչ Տ. Ռ. Պէրպէրեանի, ոչ Տ. Ց. Գուրգէնի, ոչ Տ. Մ. Մամուրեանի, ոչ Տ. Հ. Ալաճաճեանի, ոչ Տ. Տ. Մ. Մելիքեանի, ոչ Տ. Բ. Քէչեանի, ոչ Տ. Խ. Ուղուրլեանի աշխարհաբար գրութիւնքը, (Նե՛րեն ինձ գրագէտք որոց անունները կը մոռնամ) զի սոքա ամենքին իբրև զձեզ կը յարգեն և կը սիրեն՝ առաւել կամ նուազ՝ Նախնեաց մատենագրութիւնքը · Եթէ իմ աշխարհաբարս «կոկիկ է և կրնայ չատերու օրինակ ըլլալ», ինչպէս վկայեց Մասիս, գրաբարն է որ կ'օգնէ ինձ, թէպէտ մտադիւր կը խոստովանիմ որ ես չա՛տ դժգոհ եմ իմ աշխարհաբարէս · Ես չեմ վարդապետեր որ մեր ժողովուրդն առ հասարակ պէտք է գրաբար ուսանի, պէտք է գրաբար խօսի · աշխարհաբար ընտիր գրութիւնք բաւական են ժողովրդեան · աշխարհաբար մաքուր խօսակցութիւնն բաւական է Հայ ընտանեաց · Իրաւ է թէ Արևելեան Մամլոյ 1879 տարւոյն 218երորդ երեսը գրած եմ · «իմ կարծիքս է թէ պէտք է աշխատինք հայերէն Աւետարանի լեզուն գրելու և հասկնալու չափ ծաղկեցնել

— 168 —

— Առժամայն կը բաւէ · կ'ուզէ՞ք որ այս օրուընէ սկսիմ Պռէսօլի ընտանիքը փնտռել ·

— Պէտք չկայ ·

— Անգո՞րծ պիտի կենամ ·

— Ո՛չ, հետամուտ եղիք դատական պաշտօնատան եւ ոստիկանութեան ձեռք առած միջոցներն իմանալու, որովհետեւ տարակոյս չկայ թէ՝ այդ կրկին սպանութեանց պատճառաւ տակն ու վրայ եղած է · Այդ տեղեկութիւնք կրնան օգտակար լինիլ մեզ, ուստի հետազօտեցէք, բայց խոհեմութեամբ ·

— Անհոգ եղիք ·

— Առ այժմ ուրիշ խօսելիք չունինք · բաժնուինք, առ վաղիւ ·

Հինգերու ընկերութեան երկու անդամները մտերմաբար սեղմեցին Մորիսի ձեռքն, եւ երիտասարդն 17 թիւ բնակարանէն դուրս ելաւ ուրախ եւ յաղթական ·

— Օ՜ն, մրմռաց Բէյլի-Պա–Օթէւանին սանդուղէն վար իջած ժամանակ, ահա գործս կարգին դրի · Ոտքս ասպանդակին մէջ է եւ ձիս ալ լաւ · շատ հեռի պիտի երթամ ·

Վերատէ մէկ ժամու չափ Լարթիկի հետ խօսակցելէ եւ կարեւոր որոշումներ ընելէ յետոյ, բաժնուեցաւ անկէ ·

Քիչ յետոյ Լարթիկ ալ վար իջաւ, Օթէւանին պարտքը վճարեց, կառք մը բերել տուաւ եւ իւր կարասիները բեռցնելով՝ հրամայեց Լիոնի երկաթուղւոյն կայարանը տանիլ, ուր բեռները մթերանոցն յանձնեց զանոնք ·

Այս ընելէ յետոյ մեկնեցաւ կայարանէն,

— 165 —

նար անցնիլ · իմ քով մնացած բնագրերը, զոր թերեւս երրորդի մը յանձնած եմ պահարանի մը մէջ դրած, որպէս զի բանայ եւ գործածէ զանոնք երբոր ես երբեւան չլինեմ, ապահովութիւն մ'էին ինձ համար · Վստահ եմ որ կը հաւնիք ըրածիս, եւ եթէ դուք ալ իմ տեղս լինէիք, այսպէս պիտի ընէիք ·

— Իրաւունք ունիք, մեք ալ այդպէս կ'ընէինք, ըսաւ սուտ աբբայն, բայց այդ թուղթերը վտանգաւոր են ·

— Գիտեմ ·

— Չեմ առաջարկեր ձեզ ջնջել զանոնք, այլ միայն կ'առաջարկեմ, թէ պէտք է անդտանելի տեղ մը պահել, ձեր եւ մեր շահուն համար · իսկ այս ընդօրինակութիւնք ձեռքէս չպիտի ելնեն ·

— Այժմ ալ դուք ինձմէ կը կասկածիք, ըսաւ Մորիս ինքն ալ ժպտելով ·

— Դուք ձեր ապահովութեան միջոցներն ի գործ դրած էք · պէտք է որ մեք ալ մեր ապահովութեան միջոցներն ի գործ դնենք · Այժմ լաւ խորհուրդ մը տամ ·

— Պատրաստ եմ լսելու, եւ կանխաւ մտադիր հետեւելու ·

— Մեզ հետ անկեղծութեամբ գործեցէք · եթէ մեզ խաբել ուզէք, գէշ կը լինի ձեզ ·

— Այդ սպառնալիք աւելորդ է · ես անկեղծութեամբ պիտի վարուիմ, իմ շահս ալ այնպէս կը պահանջէ, վասն զի այսուհետեւ ընկերութեան պատահելիք վտանգէն ես ալ բաժին ունիմ · Այս առթիւ բան մը հարցընեմ ձեզ · կը

ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

Դրամագլուխ 1,852,000 Անգլ. ոսկի
Պահեստի դրամ 245,682 » »

LONDON AND LANCASHIRE

ԼՕՆՏՕՆ եւ ԼԱՆԳԱՇԱՅՐ

Սոյն ընկերութիւնն չափաւոր գիներով ամեն կարգի վտանգաւոր ապահովութիւնք կրնայ ընդունիլ ; Բերայի, Ղալաթիոյ, Պօլսոյ եւ մօտակայ գիւղերու մէջ, գիներու եւ այլոց վրայ տեղեկութիւն առնալ ուզողք պէտք է դիմեն առ

ԳՈՐԾԱԿԱՏԱՐ Ի ԹՈՒՐՔԻԱ
Ռ. Ֆ. ՐԱՈՒԹ
Ղալաթիա, Հալաճեան խան 16—17
ԴԵՐ-ԳՈՐԾԱԿԱՏԱՐ
Յ. ԱՍՍԱՏՈՒՐ
Կ. Պոլիս, Կամուրջի գլուխ, Եէնի-ճամի 32

մեր գրաբարը . . . երանի՛ թէ ամենապարզ գրաւոր լեզուն ծաւալէր մեր ժողովրդեան ամեն կարգերուն մէջ ։» Բայց այս հատուածոյս առաջին մասը գրագիտաց համար է, և երկրորդ մասը՝ պարզապէս իղձ մը, այսինքն թէ գրագէտք կարող ըլլան Աւետարանի հայերէնով գրաբար մատենագրել, և երանի՛ թէ ժողովուրդն ալ կարող ըլլայ հասկնալ ։ Նոյն է և Հ. Այտընեանի գրածն (Քնն. Քեր. երես 333), զոր եւ քիչ մ՚աւելի ընդարձակած եմ. «Որչափ ամէն հայազգւոյ համար բաղձալի կը համարինք գրաբար հասկընալը, նոյնչափ ալ կը ստիպուինք պահանջումնիս չափաւորել գրաբար գրելու նկատմամբ, [illegible] հասնինք»

(Մնացեալը վաղը)

ՆՈՐԱՅՐ Ն. ԲԻՒԶԱՆԴԱՑԻ

ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
Կ. Ն. ԻՒԹԻՒՃԵԱՆ

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

1884 ապրիլ 1ին (մարտ 20 ըստ Յունաց) կայսերական փողերանոցը քաշուելիք Րումելիի Օսմանեան երկաթուղեաց - վիճակահանութիւնն Օսմանեան կայսերական Պանքային յանձնուած արժէտոմսերու բաղդատոմսեր ստորագրելոյս դիմելով միայն կ՚առացուի ։

Ղալաթիա, Քօմիսիօն
խանին դիմացը թիւ 9
Դ. Փ. ԶՈՐՈՒՐԵԱՆ

ՊԱՊԸ ՍԷՐԱՍՔԵՐԻ

ԻԼԱՆ

Նիզամիյէ Թահնիյէ իտարէսինտէ 300 սէնէսի մալիյէսինտէն, սէնէի մէրգումէ մայիսի նիհայէթինէ գատար 3 մահ զարֆընտա, կէրէք ինճէ վէ կէրէք գալըն օլարագ, հասըլ օլմուշ վէ օլաճագ քէբէկլին ֆիրուխթ օլունաճաղը վէ մարթըն սէքիզինճի կիւնիւ գարարը վիրիլէճէյի էվվէլճէ իլան օլունմուշ իսէ տէ, հէվմի մէզքիւրտէ գարարը գաթիյի վիրիլէմէմիշ վէ գալըն քէբէկլին պէհէր գըյէսի օն վէ ինճէ քէբէկլին պէհէր գըյէսի օն պիր բարայա օլարագ չէրաիթի մուգարրէրէսի իլէ թալիպի էօհտէսինտէ պուլունմուշ օլտուղունտան վէ իշ պու մարթըն օն տէօրտիւնճի չարշէմպէհ կիւնիւ թէքրար պիլ միւզայէտէ գարարը գաթիսի վիրիլէճէկլինտէն վէ օն պէշինճի բէնճշէնպէհ կիւնիւ տախի, թէզայիւտ իտէն ֆիյաթը 0/0 5 զամմը գապուլ օլունաճաղընտան, իշթիրայա թալիպ օլանլարըն լէվազըմաթը ումումիյէ տայիրէսինէ կէլմէլէրի ։

10 մարթ 1300 3

Նիզամիյէ Թահնիյէ իտարէսինտէ միւթէրաքիմ օլուպ ֆիրուխթ օլընաճաք օլան 800 օգգա քէօսէլէ բարչալարընըն էսմանը նագտէն իւրա 100 ղրուշա օլարագ էվվէլճէ վիրիլմիշ պատէհու գալտըրըլմաք շարթը վէ չէրայիթի սայիրէսի իլէ պէհէր գըյէսի 3 ղրշ 10 փարայա թալիպի էօհտէսինտէ օլուպ իշպու մարթըն 14ինճի չէհարշէնպէհ կիւնի գարարը գաթիյի վիրիլէճէյինտէն վէ 15ինճի բէնշէնպէհ կիւնի տախի թէզայիւտ իտէն ֆիյաթընտան 0/0 տէ պէշ զամմը գապուլ իտէճէյինտէն, իշթիրայէ թալիպ օլանլարըն լէվազըմաթը ումումիյէ տայիրէսինէ կէլմէլէրի ։

10 մարթ 1300 3

ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ
ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՈԳԵՆԱՒՈՑ

Ընդ մէջ Անգլիոյ, Կ. Պոլսոյ եւ Օտեսայի

ԹՈՄԱՍ ՈՒԻԼՍԸՆ ՈՐԴԻՔ ԵՒ ԸՆԿ.

Անուանք	Թոնոյ	Անուանք	Թոնոյ
Ալպանօ	2,000	Լէանտրօ	4,500
Անճէլօ	3,000	Մարէնկօ	4,300
Արկօ	1,300	Մարթէլլօ	2,500
Պասսանօ	3,500	Միլօ	2,000
Պորոտինօ	2,200	Նէրօ	2,000
Պրավօ	2,000	Օթէլլօ	5,000
Գէյրօ	2,600	Օրլանտօ	3,000
Գուէպէգօ	2,500	Օրէնտօ	4,500
Գամէօ	2,100	Օտտօ	2,000
Գարօ	2,000	Բոլիֆէ	1,200
Գօճօ	2,700	Բալէրմօ	3,200
Տիտօ	2,500	Բանտէր	1,700
Տօմինօ	1,800	Քէպօ	2,800
Տրավօ	2,600	Րինալտօ	4,400
Էրատօ	2,600	Րիալտօ	3,200
Ֆալկըն	800	Րօլլօ	3,000
Ֆիտօ	1,700	Րօմանօ	5,500
Ֆլամինկօ	1,600	Րօմէօ	3,500
Կուէլֆօ	5,500	Սալէրնօ	4,000
Կիտանօ	2,200	Սաֆօ	2,000
Կօզօ	1,800	Սէլլիօ	2,000
Կրէնատօ	2,200	Սօրէնտօ	4,300
Հանկօ	-	Թասսօ	1,200
Հէրօ	2,000	Թ. Ուիլսըն	3,000
Հէրալտօ	3,000	Թէյկէր	1,500
Հըմպէր	1,200	Թօրօնտօ	2,800
Ճիւնօ	2,300	Քանտօ	3,600
Քէլսօ	2,000	Եէտտօ	3,600
Քօլպօ	2,200	Զէյլօ	1,000
Լէօ	2,000	Զէրօ	140

[illegible] շոգենաւն աստ հասաւ եւ Օտէսա պիտի ուղեւորի ։

Թոլէտօ շոգենաւը, մարտ 13ին Անգլիայէն մեկնեցաւ Կ. Պոլիս եւ Օտէսա երթալու համար, եւ ամսոյս 30 ին աստ կ՚սպասուի ։

Ուղեւորներու համար ամեն դիւրութիւն կ՚ընծայուի.

Աւելի մանրամասնութեանց համար դիմել առ ՖՐԷՏԷՐԻՔ ՀԻԼՏ
Գործակալ
Թիւ 17–18, Քիւչիւք Միլլէթ խան
Ղալաթիա ։

ՔԻՒՆԱՐՏ
ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՈԳԵՆԱՒՔ

[illegible] կը բանին Լիվէրբուլի ու Միջերկրականի մէջ.

Անուանք	Թոնոյ	Անուանք	Թոնոյ
Օրէկոն	7,000	Մալթա	3,000
Ատլաս	3,000	Մարաթոն	2,500
Ալեփփօ	3,000	Նուպիա	2,500
Պավոնիա	4,600	Բոթնիա	5,000
[illegible]	3,800	Բատավիա	3,200
[illegible]	2,500	[illegible]	3,000
[illegible]	1,200	Սերվիա	7,800
Սեֆալոնիա	5,000	Սկիւթիա	4,600
Քաթալոնիա	4,700	Սարագոսա	3,000
Շէրպուրկ	2,000	Սամարիա	3,000
[illegible]	2,500	Սիտոն	3,000
Կուպա	4,000	Թարիֆա	3,000
Քէտար	2,500	Թեսսալիա	2,500
Մարոքքօ	3,000		

Սիտոն շոգենաւը, նաւապետ Բըրտոն, Լիվրբուլէն աստ հասաւ զանազան վաճառքով, եւ ի մօտոյ դարձեալ Լիվրբուլ պիտի երթայ ։

Ստորագրեալս արտօնութիւն ունի ճամբորդ եւ վաճառք ընդունիլ Նիւ Եորքի եւ Պօսդընի, ինչպէս նաեւ Միացեալ-Նահանգաց ուրիշ կողմերուն համար՝ օրինաւոր սակագներով ։

Դիմել առ
ԹՈՄԱՍ Զ. ՃՈԼԻ, Գործակատար.
Թիւ 1 Քիւչիւք Հալիլ փաշա խան
Ղալաթիա ։

ՄՈՍ
ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Լիվէրբուլի եւ Միջերկրականի միջեւ բանող շոգենաւք

Անուանք	Թոնոյ	Անուանք	Թոնոյ
[illegible]	4,200	Ողիմպոս	3,000
Ֆարօս	4,000	Նեբիշա	3,000
Օսմանլը	4,000	Բէրա	3,000
Սեւաստոպոլ	3,250	Ատլանտիք	1,700
Թեպէ	3,250	Լօթուս	800
Մուշրալ	3,250	Օլիմփոս	800
Նէրա	3,250	Սէվիլ	750
Մարէօթիս	3,250		

Մուշրալ շոգ. նաւ. Թոմաս, մայրաքաղաքս հասաւ եւ ի մօտոյ Լիվրբուլ պիտի երթայ ։

Վերոյիշեալ շոգենաւք շքեղապէս յարդարուած են ճամբորդներու համար.

Դիմել առ Ճ. Թ. ՈՒԻԹՈԼ եւ ԸՆԿ.
Գործակատար
Մէյտանլըք սօգագ, Պօլիս
Տնօրէնութիւն, Լիվրբուլ,
ՃԷՅՄՍ ՄՈՍ եւ ԸՆԿ.
31, Ճէյմս Սդրիդ, Լիվրբուլ

Գործակալութիւնք

Ալեքսանդրիա	Ռ. Ճ. Մոս եւ ընկ.
Պէյրութ	Յ. Բաթթարաքի
Կ. Պոլիս	Յ. Վ. Ուիթալ եւ ընկ.
Դարդանէլ	Ֆրանք Քալվէրթ
Ճիպրալթար	Սմիթ, Իմոս եւ ընկ.
Մալթա	Սմիթ եւ ընկ.
Իսքէնտէրուն	Լէվի, Ֆրանք եւ ընկ.
Զմիւռնիա	Պ. Ք. Ուիթալ եւ ընկ.
Շիրա	Ն. Ք. Բէզրոբուլոյ

Ն. ԲԱՔԷ ԷՆԷ
ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Մարսիլիայի Լեւանտի միջեւ կանոնաւորապէս բանող

Մեկնում Մարսիլիայէն ամեն տասն եւ հինգ օրն անգամ մը չորեքշաբթի օրերը ։

Ուղղակի [illegible]

Տրապիզոն, Պաթում եւ Բօղի պիտի երթայ Լա Մինկրէլի շոգենաւն, որ մարտ 13ին Մարսիլիայէն եւ մարտ 20 ին Կ. Պոլսէն պիտի մեկնի ։

Մարսիլիա երթալիք յառաջիկայ շոգենաւն է Լ՚Արտէն ։

Նաւուղղէքի, ուղեւորութեան եւ այլ տեղեկութեանց համար

Դիմել առ գործակատարն
ԹԻՆԻՒՈԹԷ ՐԸՊՈՒԼ
Մումհանէ փողոց, թիւ 141

ԲԱԲԱՅԱՆԻ
ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Լիվէրբուլի, Միջերկրականի եւ Օտեսայի միջեւ կանոնաւորապէս բանող

ՇՈԳԵՆԱՒՔ

Անուանք	Թոնոյ	Նաւապետք
Այա Սօֆիա	3,000	Պրքս
Արաբիա	2,500	Ռոճըրս
Արէթուզա	2,500	Քրուիքշանք
Լատինիա	2,500	Ուիլքս
Մաքետոնիա	3,500	Մարշ
Ռումելիա	2,800	Ֆօթըրճիլ

Մաքետոնիա շոգենաւը մարտ 23 ին Օտեսայէն աստ կ՚սպասուի Լիվրբուլ երթալու համար ։

Այս շոգենաւք կին խոհարարներ ալ ունին ։

Ընկերութիւնն օրինաւոր գներով վաճառք կ՚ընդունի Եւրոպական երկիրներու եւ Ամերիկայի համար ։

Ամեն դիւրութիւն եւ հանգստութիւն կը տրուին ուղեւորաց ։

Դիմել առ ԴԱՆԻԷԼ ԲԱԲԱ ԵՒ ԸՆԿ.
Գործակալ

ՖՐԷՏ ԼԷՅԼԱՆՏ
ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՈԳԵՆԱՒՔ

Որ կանոնաւորապէս կը բանին Լիվէրբուլի եւ Արեւելից միջեւ .

Անուանք	Թոնոյ	Անուանք	Թոնոյ
Ալճէրեան	2,500	Ֆլորենտեան	3,700
[illegible]	2,500	Ֆլամինեան	3,700
Անտալուզեան	2,500	Ֆլավեան	3 700
Արմէնեան	2,500	Իպէրեան	5,500
Ասսիրեան	3,700	Իլլիրեան	4,500
Պավարեան	6,000	Իստրեան	5,500
Պուլկարեան	6,000	Լէպանեան	2,200
Քասթիլեան	800	Լիգուրեան	2,500
Սայփրեան	2,000	Լիզպօն	800
Տագոս	700	Օփօրթօ	700
Էճիփթեան	3,700	Պէրսեան	3,800
Ֆապեան	3,700	Վալենսեան	6,800
Ֆինիքեան	3,700	Վենեթեան	6,800

Ֆլամինեան շոգենաւը, նաւապետ Մուր, Լիվրբուլէն աստ հասաւ, եւ ի մօտոյ Լիվրբուլ պիտի ուղեւորի Զմիւռնիոյ ճամբով ։

Շաբաթական շոգենաւներու նոր գիծ մը հաստատեցաւ Լիվրբուլի եւ Պօսդընի միջեւ, եւ ստորագրեալս հեղուկէ զատ ուրիշ վաճառք կ՚ընդունի օրինաւոր սակագներով ։

Ուղեւորներու համար ամեն դիւրութիւն կ՚ընծայուի .

Աւելի մանրամասնութեանց համար դիմել առ ԷՏՈՒԱՐՏ ԼԱՖՈՆՏԷՆ
Գործակալ
Թիւ 34, 35, 36, Եէնի
Միլլէթ խան, Ղալաթիա
Նաւատէրք, Պարոնայք Ֆրէտ. Լէյլանտ եւ ընկ. Լիվրբուլ

ՈՒԷՍԴՔՕԴ
ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՈԳԵՆԱՒՔ

Որք կը բանին ի մէջ Լոնտոնի եւ Արեւելեան նաւահանգստաց, Սեւ ծովու եւ Դանուբի

Շոգենաւք Լոնտոնէն կանոնաւորապէս կը մեկնին Կ. Պոլիս, Օտէսա եւ Դանուբ երթալու համար, եւ օրինաւոր սակագներով վաճառք կը փոխադրեն Եւրոպայէն Արեւելից եւ Սեւ ծովու բոլոր նաւահանգիստները ։

Օրէօ շոգենաւը, նաւապետ Բէկտըն, Լոնտոնէն մեկնելով աստ հասաւ եւ իւր բեռը պարպելով Օտէսա պիտի երթայ ։

Լոնտոնի մէջ բեռ կառնուն.

Ջորճ Հօմըր շոգենաւն Օտէսայի համար ։

Էֆիէն շոգենաւն Օտէսայի համար.

Պէրէլ շոգենաւը Լոնտոնէն մեկնեցաւ Դանուբ երթալու համար։

Ճէյմս Ոսկ, մարտ 10ին Լոնտոնէն Դանուբ ուղեւորեցաւ ։

Պէրլ շոգենաւը մայրաքաղաքէս պիտի ուղեւորի Ռոստոֆ եւ Լոնտոն ։

Ամպէրլէյ շոգենաւը մայրաքաղաքէս պիտի ուղեւորի Պանտըրմա, Իզմիտ եւ Լոնտոն ։

Աւելի մանրամասնութիւններ եւ գնոց վրայ տեղեկութիւն առնելու համար դիմել առ

ՄՈՐԴԸՆ ԵՒ ԸՆԿ.
Գործակալ
Ղալաթիա, Կ. Պոլիս
կամ առ ՈՒԷՍԴՔՕԴ ԵՒ ԼՈՐԱՆՍ
9, Ֆէնչըրչ Սդր. Լոնտոն.

Ֆրանսայի եւ օտար երկիրներու ամեն հռչակաւոր [illegible] եւ վարսայարդարաց քով.

La
VELOUTINE
Poudre de Riz spéciale
PRÉPARÉE AU BISMUTH
Par CH^les FAY, Parfumeur
PARIS – 9, Rue de la Paix, 9 – PARIS

—166—

կարծէ՞ք որ ճանչուին այն երկու դիակներն, որք անշուշտ դիակնարան տարուած են ։

— Այդ մասին վախ չունինք, ըսաւ Վէրտիէ ։ Ուրիշ բան է եթէ անակնկալ դիպուած մը պատահի ։ Ժէննի Սթալ տասն եւ հինգ օրէ ի վեր Փարիզ եկած էր, եւ դուրս ելած ժամանակ երբեմն հաստ քող մը կը ծածկէր ։ Ինծ հետ կը բնակէր, եւ կրնայ կարծուիլ թէ մեկնած է Փարիզէն ։ Իսկ Ժօնաթան Ուիլս, քսան տարիէ ի վեր Փարիզէն հեռացած էր ։

— Լաւ, բայց Ժէննի եւ Ժօնաթան կրնան տեղ մը ճանչուած լինիլ, եւ անոնց ճերմակեղէններուն վրայ նշանակուած սկզբնատառերը քննութեանց առիթ տան ։

— Այդ կարելի չէ, վասն զի մեք կանխաւ մեզ համար այդ զգուշութիւն ըրած ենք, եւ մեր գործածած անձերն ալ անուան սկզբնատառի նշաններ չեն գործածեր իրենց ճերմակեղէններուն վրայ, կամ բոլորովին քմածին նշաններ կը գործածեն խուզարկութիւններն ի դերեւ հանելու համար ։ Դուք ջանացէք օգուտ քաղել ձեզ տուած խորհրդէս ։

— Պիտի քաղեմ, եւ ամեն բանի մէջ ձեր խորհրդոց պիտի հետեւիմ ։

— Խոհեմութիւնն այնպէս կը պահանջէ ։ Ի՞նչ է ձեր անունը ։

— Մորիս ։

— Այդ մկրտութեան անունն է ։ Ձեր մականո՞ւնը ։

— Բուն մականունս չեմ գիտեր ։ Արդէն ըսի ձեզ թէ՝ իմ ծնունդս գաղտնիքով ծածկուած է ։

—167—

Բայց ընկեցիկ տղայ մը չկարծուելու համար, Վասէօր մականունն առած եմ ։

— Քսան երեք տարու էք ։

— Գրեթէ ։

— Ո՞ւր կը բնակիք ։

— Նավարէն փողոց, թիւ 9 ։

Լարթիկ իւր յուշատետրին վրայ նշանակեց այս հասցէն ։

— Վաղ առաւօտ ժամադրութեան տոմսակ մը պիտի ստանաք ինծմէ ։

— Ո՞ւր պիտի ժամադրէք, հարցուց Մորիս ։

— Դեռ չեմ գիտեր ։

— Հապա ինչո՞ւ չէք ժամադրեր ։

— Այսօր պիտի ելնեմ այս օթեւանէն, անհրաժեշտ ապահովութեան նպատակաւ, եւ դեռ չեմ գիտեր թէ ուր պիտի բնակիմ ։

— Պիտի սպասեմ ձեր տոմսակին, եւ ուր որ ժամադրէք հոն պիտի գտնէք զիս ։

— Դրամի պէտք ունի՞ք, հարցուց Վէրտիէ ։

— Այո՛, որովհետեւ աղքատ եմ, եւ հարիւր հազար ֆրանքը ձեզ յանձնեցի ։

Սուտ աբբային պանքատոմսերու ծրարը բացաւ ։

Քսան եւ հինգ հատը Մորիսի տուաւ ըսելով.

— Առ այժմ առէք այսչափը։ Զգուշացէք բաղդախաղէ, շռայլ ծախքերէ, աղմկաւոր զուարճութիւններէ, վերջապէս մէկ խօսքով, այն ամեն բանէ, որք կրնան ոստիկանութեան ուշադրութիւնն հրաւիրել ձեր վրայ եւ ձեր վիճակը գիտցող մարդոց զարմանք պատճառել ։ Այս քսան եւ հինգ հազար ֆրանքը կը բաւէ ձեզ ։

ՀՐԴԵՀԻ ԴԷՄ ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ

NORTH BRITISH AND MERCANTILE
Insurance company

ՆՈՐԹՀ ՊՐԻԹԻՇ ԷՆՏ ՄԷՐՔԸՆԹԱՅԼ

Լոնտոնի եւ Էտինպուրկի ապահովութեան ընկերութիւն

	Անգլ. Լիր.	
Արտօնեալ դրամագլուխ	3,000,000	
Բաժանորդագրեալ »	2,000,000	
Վճարեալ դրամագլուխ	500,000	
Պահեստի դրամ հրդեհի պատահականութեանց դէմ	1,274,661	
Կեանքի պատահականութեանց դէմ պահեստի դրամ	3,855,529	
		5,630,190
Հրդեհի ճիւղէն հասոյթ 1882 տարւոյ	1,157,124	
Կենաց ճիւղէն հասոյթ 1882 տարւոյն	484,798	
		1,641,922

NORTHERN
Assurance company

ՆՈՐԹՀԸՐՆ

Լոնտոնի եւ Էպէրտինի ապահովութեան ընկերութիւն

	Անգլ. Լիր.	
Բաժանորդագրեալ դրամագլուխ	3,000,000	
Վճարեալ դրամագլուխ	300 000	
Պահեստի դրամ հրդեհի պատահականութեանց դէմ	778,889	
Կեանքի պատահականութեանց դէմ պահեստի դրամ	1,670,519	
		2,749,408
Հրդեհի ճիւղէն հասոյթ 1882 տարւոյ	460,126	
Կեանքի ճիւղէն հասոյթ 1882 տարւոյ	245,161	
		705,287

Ստորագրեալն իւր բազմաթիւ յաճախորդաց և քաղաքիս ընդհանուր յարգոյ հասարակութեան կը ծանուցանէ թէ ինքն վերոյիշեալ երկու ընկերութեանց միացեալ գործակատար ընտրուած ըլլալով, այնպիսի դրութեան մը մէջ կը գտնուի, որով Հրդեհի դէմ ապահովութեան մեծ դիւրութիւններ կը մատուցանէ ։

Ապահովութեանց կարգադրութիւնները կը բաղկանան երկու ընկերութեանց մէջ համեմատական բաժանումէ մը, և այսպէս ապահովութեան և դիւրութեան աւելնալովն՝ Ընկերութիւնս ալ կրնայ աւելի մեծագումար ապահովութիւն բռնողներու ինքզինք ներկայացնել ։

Գրեթէ ամեն կարգի վտանգաւոր ապահովութիւնք կրնան ընդունուիլ, ինչպէս Բերայի, Ղալաթիոյ և Պօլսոյ մէջ, նոյնպէս մօտակայ քաղաքները, գիւղերն եւ գաւառները ։

MARITIME
Insurance Cie limited of Liverpool
Capital Lt. 500,000

ՄԱՐԻԹԱՅՄ
Ծովային ապահովութեան ընկերութիւն
Դրամագլուխ 500,000 Անգլ. լիրա

Ստորագրեալը, շոգենաւերու և առագաստանաւերու մէջի վաճառքներն ու կարասիները խիստ օգտակար պայմաններով ապահովելու իշխանութիւն առած է ընկերութեան կողմէ ։

Գիներուն եւ այլոց վրայ տեղեկութիւն առնալ ուզողք պէտք է դիմեն Ղալաթա Քօմիսիօն խանի անկիւնը՝ երկաթէ կամուրջին վրայ նայող սենեակն, առ

Թուրքիոյ Ընդհ. Գործակատար յիշեալ Ընկերութեանց
ԳԱՌՆԻԿ Յ. ՍԵՐՈԲԵԱՆ

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՅ ՊՈՐՍԱ

Ղալաթիա 12 մարտ

ԸՆԹԱՑՔ ՓՈԽԱՆԱԿՈՒԹԵԱՆ

(Օսմ. ոսկին 100 ղրուշի հաշուով)

Լոնտրա 3 ամիս, ղրշ. 110,1/8 առ Անգլ. լիր.
Փարիզ 3 » Ֆր. 22,87 1/2 առ Օսմ. լիր.

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԷԹՂԹՈՑ

Օսմ. Քօնս. գոցուեցաւ	9,19 1/2
բացուեցաւ	9,20
կէս օրին	9,21
Եգիպտ. միաց. բաց. ոսկի	74, 30
Րումէլիի երկաթուղի	42, 50

ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՑ

(Օսմ. ոսկին 100 ղրշէն) Ղրշ.

Անգղիական ոսկի	110	5
Գաղղիական »	87	26
Բօլ	90	10
Գրիմեց	81	10
Գաայօն թուղթ (գարիք)	804	
» արծաթ (նոր)	89	15
Մէճիտիէի տարբերութիւն	108	10
Վեցնոց	105	5
Հինգնոց	102	30
[illegible]	100	20

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտրա 22 մարտ.

Անգղ. Քօնս.	102 1/16
Օսմ. »	8 5/8
Փոխ. 1865	10 5/8
» 1869	9 1/2
» 1871	69
» 1872	16 1/2
» 1873	8 1/2
» 1877	80 1/4
Պանք Օթօման	15 7/8
Ռուս. փոխ. 73ի	90 7/8
Եգիպտ. միացեալ	67 3/4
» արտօնաւոր	92 3/8
Տայրա Սանիէ	67 1/4
Փոխ. Ռօչիլտ	89
Փոխանակագիր Փարիզի վրայ	'

Փարիզ 22 մարտ.

Գաղղ. Քօնս. 3 0/0	75,67 1/2
» » 4 1/2 0/0	108·67 1/2
Օսմ. Քօնս.	8,62 1/2
Փոխ. 1865 Ֆր.	53
» 1869	49
» 1873	45,
Օսմ. Երկաթուղի	41,25
Պանք Օթօման (գ. կ.)	648,75
Քրէտի Լիոնէ (գ. կ.)	550,
Ռուս. փոխ. 5 առ 0/0 (1877)	96 3/8
» » Արեւելեան	
Իտալ. Քօնս.	93 70